1. Սույն Հիմնադրույթով սահմանվում է այն ապրանքների միասնական ցանկի 2.21 բաժնում ներառված՝ մարդու օրգաններ և հյուսվածքներ, արյուն և դրա բաղադրամասեր, մարդու կենսաբանական նյութերի նմուշներ Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածք ներմուծելու (այսուհետ համապատասխանաբար՝ Միություն, ներմուծում,) և Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածքից արտահանելու (այսուհետ՝ արտահանում) կարգը, որոնց նկատմամբ երրորդ երկրների հետ առևտրի ժամանակ կիրառվում են «Երրորդ երկրների առևտրային ոչ սակագնային կարգավորման միջոցների մասին» արձանագրությամբ նախատեսված ոչ սակագնային կարգավորման միջոցները («Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի թիվ 7 հավելված) (այսուհետ համապատասխանաբար՝ մարդու օրգաններ ու հյուսվածքներ, արյուն և դրա բաղադրամասեր, միասնական ցանկ):

2. Սույն Հիմնադրույթի նպատակներով գործածվող հասկացություններն ունեն հետևյալ իմաստը՝  
«մարդու կենսաբանական հեղուկներ»՝ մարդու օրգանիզմի կողմից արտադրվող հեղուկներ, որոնց դասվում են նաև ամնիոտիկ հեղուկը, թարախը, արյունը, ավիչը, խորխը, լեղին, կաթնախեժը, մեզը, շագանակագեղձի արտազատուկը, լորձաթաղանթների լորձը, սինովիալ (ծուսպային) հեղուկը, սերմնահեղուկը, ողնուղեղային հեղուկը, հյուսվածքային հեղուկը, պլազա հեղուկը, քթի լորձը, քրտինքը, տրանսուդատը, ականջի ծծումբը և էքսուդատը (արտաքիտը):

«մարդու կենսաբանական նյութերի նմուշներ»՝ մարդու բջիջների, հյուսվածքների, կենսաբանական հեղուկների, արտազատուկների, կենսագործունեության արգասիքի, ֆիզիոլոգիական ու ախտաբանական արտաթորանքի, քսուկների, քերուկների, վլացուկների նմուշներ, որոնք օգտագործվում են ախտորոշման ու գիտական նպատակներով, և որոնք նախատեսված են հետազոտությունների որակի արտաքին հսկողություն, այդ թվում՝ ռեֆերենս-հետազոտություններ իրականացնելու համար կամ ստացվել են կենսաբաժնակալում և (կամ) կլինիկական հետազոտություններ իրականացնելու ընթացքում:

Սույն Հիմնադրույթում գործածվող մյուս հասկացությունները կիրառվում են «Երրորդ երկրների առևտրային ոչ սակագնային կարգավորման միջոցների մասին» արձանագրությամբ («Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի 7-րդ հավելված) և Միության իրավունքի մաս կազմող միջազգային պայմանագրերով սահմանված իմաստներով:

3. Մարդու օրգանների և հյուսվածքների, արյան ու դրա բաղադրամասերի ներմուծումը և (կամ) արտահանումն իրականացվում են Ապրանքների առանձին տեսակների արտահանման և (կամ) ներմուծման համար լիցենզիա ստանալու մասին հայտի ձևակերպման ու Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կողմից 2014 թվականի նոյեմբերի 6-ի թիվ 199 որոշմամբ հաստատված այդպիսի լիցենզիայի ձևակերպման առնչվող հրահանգին համապատասխան ձևակերպված լիցենզիայի (այսուհետ՝ լիցենզիա) կամ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի 2012 թվականի մայիսի 16-ի թիվ 45 որոշմամբ հաստատված ձևով կազմված եզրակացության (այսուհետ՝ եզրակացություն (թույլատրագիր)) առկայության դեպքում՝ բացառությամբ սույն Հիմնադրույթի 8-րդ կետով նախատեսված դեպքերի:

4. Ֆիզիկական անձանց կողմից մարդու օրգանների և հյուսվածքների, արյան ու դրա բաղադրամասերի, բացառությամբ մարդու կենսաբանական նյութերի նմուշների, ներմուծումը և (կամ) արտահանումը՝ որպես անձնական օգտագործման ապրանքներ, արգելված են:

Ֆիզիկական անձանց կողմից մարդու կենսաբանական նյութերի նմուշների ներմուծումը և (կամ) արտահանումը՝ որպես անձնական օգտագործման ապրանքներ, իրականացվում են եզրակացության (թույլատրագիր) առկայության դեպքում:

## II. Մաքսային ընթացակարգերով ձևակերպելը

5. Ոչ ազգակցական փոխադրվածություն իրականացնելու նպատակով մարդու օրգանների և հյուսվածքների, արյան ու դրա բաղադրամասերի, բացառությամբ մարդու կենսաբանական նյութերի նմուշների, հեմոպոետիկ ցողունային բջիջների, ոսկրածուծի, դոնորական լիմֆոցիտների, միասնական ցանկի 2.21 բաժնում ներառված սեռական բջիջների ու էմբրիոնների «արտահանում» և «ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգով ձևակերպումն իրականացվում է Միության անդամ պետության (այսուհետ՝ անդամ պետություն) մաքսային մարմին լիցենզիա ներկայացվելու դեպքում:

Ոչ ազգակցական փոխադրվածություն իրականացնելու նպատակով մարդու կենսաբանական նյութերի նմուշների, հեմոպոետիկ ցողունային բջիջների, ոսկրածուծի, դոնորական լիմֆոցիտների, միասնական լիմֆոցիտների, միասնական ցանկի 2.21 բաժնում ներառված սեռական բջիջների ու էմբրիոնների «արտահանում» և «ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգով ձևակերպումն իրականացվում է անդամ պետության մաքսային մարմին եզրակացություն (թույլատրագիր) ներկայացվելու դեպքում:

6. Մարդու օրգանների և հյուսվածքների, արյան ու դրա բաղադրամասերի «վերամշակում» մաքսային տարածքում, «վերամշակում» մաքսային տարածքից դուրս», «վերամշակում» ներքին սպառման համար՝ մաքսային ընթացակարգերով ձևակերպումն իրականացվում է անդամ պետության մաքսային մարմին եզրակացություն (թույլատրագիր) ներկայացվելու դեպքում:

7. Սույն Հիմնադրույթի 6-րդ կետում նշված մաքսային ընթացակարգերի գործողությունը եզրափակելու նպատակով մարդու օրգանների և հյուսվածքների, արյան ու դրա բաղադրամասերի «վերամշակում» և «վերաներմուծում» մաքսային ընթացակարգերով ձևակերպումն իրականացվում է մարդու օրգանները և հյուսվածքները, արյունն ու դրա բաղադրամասերը սույն Հիմնադրույթի 6-րդ կետում նշված մաքսային ընթացակարգերով ձևակերպելու համար անդամ պետության մաքսային մարմին ներկայացված եզրակացության (թույլատրագիր) առկայության դեպքում:

8. Չի պահանջվում լիցենզիա կամ եզրակացություն (թույլատրագիր) ներկայացնել անդամ պետության մաքսային մարմին այն դեպքերում, երբ մարդու օրգանները և հյուսվածքները, արյունն ու դրա բաղադրամասերը ձևակերպվում են՝

ա) «մաքսային տարանցում» և «ոչնչացում» մաքսային ընթացակարգերով:

բ) «վերարտահանում» կամ «վերաներմուծում» մաքսային ընթացակարգերով՝ համապատասխանաբար ավելի վաղ «ներքին սպառման համար բացթողում» մաքսային ընթացակարգով ձևակերպված կամ ավելի վաղ «արտահանում» մաքսային ընթացակարգի համապատասխան արտահանված ապրանքների նկատմամբ:

9. Մարդու օրգանների և հյուսվածքների, արյան ու դրա բաղադրամասերի «մաքսային պահեստ», «ժամանակավոր ներմուծում (ընդունում)», «ժամանակավոր ներմուծում», «հրաժարում՝ հոգուտ պետության», «ազատ մաքսային գոտի», «ազատ պահեստ» և «անմաքս առևտուր» մաքսային ընթացակարգերով ձևակերպումը չի թույլատրվում:

## III. Լիցենզիաների տրամադրումը

10. Իրավաբանական անձինք և որպես անհատ ձեռնարկատեր գրանցված ֆիզիկական անձինք (այսուհետ՝ հայտատուներ) լիցենզիայի ձևակերպման համար «Ապրանքների արտահանման և (կամ) ներմուծման լիցենզիաների ու թույլտվությունների տրամադրման կանոններ» («Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի 7-րդ հավելվածի հավելված) (այսուհետ՝ Կանոններ) 10-րդ կետի 1-ից 5-րդ ենթակետերում նշված փաստաթղթերն ու տեղեկությունները ներկայացնում են այն անդամ պետության լիազորված մարմին, որի տարածքում է գրանցված հայտատուն:

11. Հայտատուի կողմից ներկայացվող փաստաթղթերի պատճենները պետք է վավերացված լինեն Կանոնների 11-րդ կետով սահմանված կարգով:

12. Եթե, երբ անդամ պետության օրենսդրությամբ համապատասխան լիցենզիա տրամադրելու մասին որոշումը լիազորված մարմնի կողմից ընդունվում է տվյալ անդամ պետության պետական իշխանության այլ մարմնի (այսուհետ՝ համաձայնեցնող մարմին) հետ համաձայնեցմամբ, ապա այդ համաձայնեցումն իրականացվում է տվյալ անդամ պետության օրենսդրությամբ նախատեսված կարգով: Հայտատուի կողմից համաձայնեցնող մարմին են ներկայացվում սույն Հիմնադրույթի 10-րդ կետում նշված փաստաթղթերը, եթե դա նախատեսված է անդամ պետության օրենսդրությամբ:

Համաձայնեցումը կարող է իրականացվել եզրակացություն (թույլատրագիր) տրամադրելու միջոցով:

13. Լիազորված մարմինը տրամադրում է մարդու օրգանների արտահանման և (կամ) ներմուծման լիցենզիաները հայտատուի կողմից փաստաթղթերը ներկայացնելու օրվանից մեկ աշխատանքային օրվա ընթացքում, իսկ մարդու հյուսվածքների, արյան ու դրա բաղադրամասերի արտահանման և (կամ) ներմուծման լիցենզիաները՝ հայտատուի կողմից փաստաթղթերը ներկայացնելու օրվանից երեք աշխատանքային օրը չզերազանցող ժամկետում:

14. Լիցենզիայի տրամադրումը մերժվում է Կանոնների 14-րդ կետի 1-4-րդ ենթակետերով նախատեսված հիմքերի առկայության դեպքում, ինչպես նաև Կանոնների 14-րդ կետի 6-րդ ենթակետին համապատասխան՝ համաձայնեցնող մարմնի լիցենզիայի տրամադրման մասին հայտի համաձայնեցումը մերժելու դեպքում:

## IV. Եզրակացության (թույլատրագիր) տրամադրումը

15. Եզրակացության (թույլատրագիր) տրամադրումն իրականացվում է եզրակացություններ (թույլատրագրեր) տրամադրելու համար անդամ պետության օրենսդրությամբ համապատասխան լիազորված՝ անդամ պետության պետական իշխանության մարմնի կողմից (այսուհետ՝ եզրակացություն (թույլատրագիր) տալու համար լիազորված՝ անդամ պետության մարմին) տվյալ անդամ պետության օրենսդրությամբ նախատեսված կարգով:

16. Եզրակացությունը (թույլատրագիրը) տրամադրվում է անդամ պետության՝ եզրակացություն (թույլատրագիր) տրամադրելու համար լիազորված մարմնի հետևյալ փաստաթղթերն ու տեղեկությունները ներկայացնելու դեպքում՝

ա) հայտատուի կողմից՝

այն Ապրանքների միասնական ցանկում ներառված առանձին ապրանքների ներմուծման, արտահանման և տարանցման եզրակացության (թույլատրագրի) միասնական ձևը լրացնելու վերաբերյալ մեթոդական ցուցումներին համապատասխան ձևակերպված եզրակացության (թույլատրագրի) նախագիծը, որոնց նկատմամբ Եվրասիական տնտեսական համայնքի շրջանակներում Մաքսային միության անդամ պետությունների կողմից երրորդ երկրների հետ առևտրում կիրառվում են Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կողմից 2012 թվականի մայիսի 16-ի թիվ 45 որոշմամբ հաստատված ներմուծման կամ արտահանման արգելքները կամ սահմանափակումները:

Կանոնների 10-րդ կետի 5-րդ ենթակետում նշված փաստաթղթերը կամ տեղեկությունները:

պայմանագրի պատճենը, իսկ պայմանագրի բացակայության դեպքում՝ Կողմերի մտադրությունները հաստատող այլ փաստաթղթի պատճենը:

հիվանդի կամ նրա օրինական ներկայացուցիչների տեղեկացված համաձայնությունը մարդու կենսաբանական նյութերի նմուշները տեղափոխելու համար՝ բացառությամբ այնպիսի դեպքերի, երբ այդպիսի նմուշները տեղափոխվում են հետազոտությունների որակի արտաքին հսկողություն, այդ թվում՝ ռեֆերենս-հետազոտություններ իրականացնելու համար:

անդամ պետության օրենսդրությամբ նախատեսված այլ փաստաթղթեր:

բ) Ֆիզիկական անձի կողմից մարդու կենսաբանական նյութերի նմուշները որպես անձնական օգտագործման ապրանքներ տեղափոխելու դեպքում՝

սույն կետի «ա» ենթակետի երկրորդ պարբերության մեջ նշված մեթոդական ցուցումներին համապատասխան ձևակերպված եզրակացության (թույլատրագրի) նախագիծը:

անձը հաստատող փաստաթղթերի պատճենները կամ տեղեկություններ անձը հաստատող փաստաթղթերից (սերիան, համարը, երբ և ում կողմից է տրվել, անձնական համարը (առկայության դեպքում), բնակության վայրի հասցեն), եթե դա նախատեսված է անդամ պետության օրենսդրությամբ:

հիվանդի կամ նրա օրինական ներկայացուցիչների տեղեկացված համաձայնությունը մարդու կենսաբանական նյութերի նմուշները տեղափոխելու համար:

17. Եզրակացության (թույլատրագրի) տրամադրումը մերժվում է հետևյալ հիմքերի առկայության դեպքում՝  
ա) սույն Հիմնադրույթի 16-րդ կետով նախատեսված փաստաթղթերը չներկայացնելը:  
բ) եզրակացություն (թույլատրագիր) ստանալու համար ներկայացված փաստաթղթերում թերի կամ անարժանահավատ տեղեկությունների առկայությունը:  
գ) անդամ պետությունների օրենսդրությամբ նախատեսված այլ հիմքեր:

18. Ոչ ազգակցական փոխապատկաստում իրականացնելու նպատակով հեմոպոետիկ ցողունային բջիջների, ոսկրածուծի, դոնորական լիմֆոցիտների, միասնական ցանկի 2.21 բաժնում ներառված սեռական բջիջների ու էմբրիոնների ներմուծման և (կամ) արտահանման վերաբերյալ եզրակացությունը (թույլատրագիրը) տրամադրվում է մեկ տարին չզերազանցող ժամկետով՝ անկախ Միության մաքսային սահմանով տեղափոխությունների թվից:  
19. Հայտատուները տեղափոխում իրականացնելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում պարտավոր են տեղեկացնել անդամ պետության՝ եզրակացություն (թույլատրագիր) տրամադրելու համար լիազորված մարմնին ոչ ազգակցական փոխապատկաստում իրականացնելու նպատակով հեմոպոետիկ ցողունային բջիջների, ոսկրածուծի, դոնորական լիմֆոցիտների, միասնական ցանկի 2.21 բաժնում ներառված սեռական բջիջների ու էմբրիոնների ներմուծում և (կամ) արտահանում իրականացնելու մասին:  
20. Ախտաբանական և գիտական նպատակներով մարդու կենսաբանական նյութերի նմուշների տեղափոխման վերաբերյալ եզրակացությունը (թույլատրագիրը) տրամադրվում է մեկ տարին չզերազանցող ժամկետով՝ անկախ Միության մաքսային սահմանով տեղափոխությունների թվից:

ՀԱՎԵԼԱԾ ԹԻՎ 4  
Եվրասիական տնտեսական  
հանձնաժողովի կոլեգիայի  
2015 թվականի ապրիլի 21-ի  
թիվ 30 որոշման

## Հ Ի Մ Ա Ն Դ Դ ՈՒ Ց Ց

### մաքսային միության մաքսային տարածքից հանքային հումքի արտահանման կարգի մասին

#### I. Ընդհանուր դրույթներ

1. Սույն Հիմնադրույթով սահմանվում է այն ապրանքների միասնական ցանկի 2.11 բաժնում ներառված հանքային հումքը Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածքից արտահանելու (այսուհետ համապատասխանաբար՝ արտահանում, Միություն) կարգը, որոնց նկատմամբ երրորդ երկրների հետ առևտրի ժամանակ կիրառվում են «Երրորդ երկրների առևտրային ոչ սակագնային կարգավորման միջոցների մասին» արձանագրությամբ նախատեսված ոչ սակագնային կարգավորման միջոցները («Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի թիվ 7 հավելված) (այսուհետ՝ հանքային հումք):

Հանքային հումքին չեն դասվում այն Ապրանքների միասնական ցանկի 2.4 բաժնում ներառված հանքաբանական հավաքածուները և հավաքածուների համար նախատեսված առարկաները, որոնց նկատմամբ Եվրասիական տնտեսական համայնքի շրջանակներում Մաքսային միության անդամ պետությունների կողմից երրորդ երկրների հետ առևտրում կիրառվում են Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի օգոստոսի 16-ի թիվ 134 որոշմամբ հաստատված ներմուծման կամ արտահանման արգելքները կամ սահմանափակումները:

2. Սույն Հիմնադրույթում գործածվող հասկացությունները կիրառվում են «Երրորդ երկրների առևտրային ոչ սակագնային կարգավորման միջոցների մասին» արձանագրությամբ («Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի 7-րդ հավելված) և Միության իրավունքի մաս կազմող միջազգային պայմանագրերով սահմանված իմաստներով:

3. Հանքային հումքի արտահանումն իրականացվում է Ապրանքների առանձին տեսակների արտահանման և (կամ) ներմուծման համար լիցենզիա ստանալու մասին հայտի ձևակերպման ու Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2014 թվականի նոյեմբերի 6-ի թիվ 199 որոշմամբ հաստատված այդպիսի լիցենզիայի ձևակերպման առևձյուղ հրահանգին համապատասխան ձևակերպված լիցենզիայի (այսուհետ՝ լիցենզիա) կամ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի 2012 թվականի մայիսի 16-ի թիվ 45 որոշմամբ հաստատված ձևով կազմված եզրակացության (այսուհետ՝ եզրակացություն (թույլատրագիր)) առկայության դեպքում՝ բացառությամբ սույն Հիմնադրույթի 7-րդ կետով նախատեսված դեպքերի:

4. Հանքային հումքի արտահանումը ֆիզիկական անձանց կողմից որպես անձնական օգտագործման ապրանք արգելվում է:

#### II. Մաքսային ընթացակարգերով ձևակերպումը

5. Հանքային հումքի «արտահանում» մաքսային ընթացակարգով ձևակերպումն իրականացվում է Միության անդամ պետության (այսուհետ՝ անդամ պետություն) մաքսային մարմին լիցենզիա ներկայացվելու դեպքում:

6. Հանքային հումքի «մաքսային տարածքից դուրս վերաձևակերպում» մաքսային ընթացակարգով ձևակերպումն իրականացվում է անդամ պետության մաքսային մարմին եզրակացություն (թույլատրագիր) ներկայացվելու դեպքում:

7. Հանքային հումքի «վերաարտահանում» և ներքին մաքսային մարմնից մինչև Միության մաքսային տարածքից մեկնման վայրի մաքսային մարմին «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգերով ձևակերպումն իրականացվում է առանց անդամ պետության մաքսային մարմին լիցենզիա կամ եզրակացություն (թույլատրագիր) ներկայացնելու:

8. Հանքային հումքի ձևակերպումը «Ժամանակավոր ներմուծում» և «անմաքս առևտուր» մաքսային ընթացակարգերով չի թույլատրվում:

#### III. Լիցենզիայի տրամադրումը

9. Իրավաբանական անձինք և որպես անհատ ձեռնարկատեր գրանցված ֆիզիկական անձինք (այսուհետ՝ հայտատուներ) լիցենզիայի ձևակերպման համար «Ապրանքների արտահանման և (կամ) ներմուծման լիցենզիաների ու թույլտվությունների տրամադրման կանոններ» («Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի 7-րդ հավելվածի հավելված) (այսուհետ՝ Կանոններ) 10-րդ կետի 1-5-րդ ենթակետերում նշված փաստաթղթերն ու տեղեկությունները, ինչպես նաև Կանոնների 10-րդ կետի 6-րդ ենթակետին համապատասխան հետևյալ փաստաթղթերը ներկայացնում են այն անդամ պետության լիազորված մարմին, որի տարածքում գրանցված է հայտատուները՝

հանքային հումքի արդյունահանման օրինակակառուցումը հաստատող՝ անդամ պետության օրենսդրությամբ նախատեսված փաստաթղթերի պատճենները:

հանքային հումքի տիրապետման օրինակակառուցումը հաստատող փաստաթղթերի պատճենները:  
Երրորդ երկրներից ներմուծված հանքային հումքի արտահանման դեպքում հայտատուն՝ որպես հանքային հումքի արդյունահանման և տնօրինման օրինակակառուցումը հաստատող փաստաթղթեր, ներկայացնում է ապրանքների մասին այն հայտարարագրի պատճենը, որին համապատասխան իրականացվել է հանքային հումքը շրջանառության մեջ դնելը, կամ Միության մաքսային տարածքում այդ հանքային հումքի գտնվելու օրինակակառուցումը հաստատող՝ անդամ պետության դատարանի որոշումը:

Հանքային հումքի արդյունահանման պետություն չհանդիսացող անդամ պետության տարածքից հանքային հումքի արտահանման դեպքում հայտատուն՝ որպես հանքային հումքի արդյունահանման օրինակակառուցումը հաստատող փաստաթղթեր, ներկայացնում է եզրակացություն (թույլատրագիր), որը տրամադրվել է այն անդամ պետության պետական իշխանության պետության օրենսդրությանը համապատասխան եզրակացություններ (թույլատրագրեր) տրամադրելու համար լիազորված մարմնի կողմից (այսուհետ՝ անդամ պետության՝ եզրակացություններ (թույլատրագրեր) տրամադրելու համար լիազորված մարմին), որի տարածքում արդյունահանվել է այդ հանքային հումքը:

10. Հայտատուի կողմից ներկայացվող փաստաթղթերի պատճենները պետք է վավերացված լինեն Կանոնների 11-րդ կետով սահմանված կարգով:

11. Եթե անդամ պետության օրենսդրությանը համապատասխան լիցենզիա տրամադրելու մասին որոշումը լիազորված մարմնի կողմից ընդունվում է տվյալ անդամ պետության պետական իշխանության այլ մարմնի (այսուհետ՝ համաձայնեցնող մարմին) հետ համաձայնեցմամբ, ապա այդ համաձայնեցումն իրականացվում է տվյալ անդամ պետության օրենսդրությամբ նախատեսված կարգով:

Հայտատուի կողմից համաձայնեցնող մարմին են ներկայացվում սույն Հիմնադրույթի 9-րդ կետում նշված փաստաթղթերը, եթե դա նախատեսված է անդամ պետության օրենսդրությամբ: Ընդ որում, սույն Հիմնադրույթի 9-րդ կետի երկրորդ և երրորդ պարբերություններում նշված փաստաթղթերը (հաշվի առնելով սույն Հիմնադրույթի 9-րդ կետի չորրորդ և հինգերորդ պարբերությունները) չեն ներկայացվում լիազորված մարմին:

Համաձայնեցում կարող է իրականացվել եզրակացություն (թույլատրագիր) տրամադրելու միջոցով:

12. Լիցենզիայի տրամադրումը մերժվում է Կանոնների 14-րդ կետի 1-ից 4-րդ ենթակետերով նախատեսված հիմքերի առկայության դեպքում, ինչպես նաև Կանոնների 14-րդ կետի 6-րդ ենթակետին համապատասխան՝ համաձայնեցնող մարմնի՝ լիցենզիայի տրամադրման մասին հայտի համաձայնեցումը մերժելու դեպքում:

IV. Եզրակացության (թույլատրագրի) տրամադրումը

13. Եզրակացության (թույլատրագրի) տրամադրումն իրականացվում է անդամ պետության՝ եզրակացություններ (թույլատրագրեր) տրամադրելու համար լիազորված մարմնի կողմից՝ սովյալ անդամ պետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

14. Եզրակացությունը (թույլատրագիրը) տրամադրվում է անդամ պետության՝ եզրակացություններ (թույլատրագրեր) տրամադրելու համար լիազորված մարմնի կողմից անդամ պետության փաստաթղթերը ներկայացնելու դեպքում՝

այն Ապրանքների միասնական ցանկում ներառված առանձին ապրանքների ներմուծման, արտահանման և տարանցման վերաբերյալ եզրակացության (թույլատրագրի) միասնական ձևը լրացնելու վերաբերյալ մեթոդական ցուցումներին համապատասխան ձևակերպված եզրակացության (թույլատրագրի) նախագիծը, որոնց նկատմամբ Եվրասիական տնտեսական համայնքի շրջանակներում Մաքսային միության անդամ պետությունների կողմից երրորդ երկրների հետ առևտրում կիրառվում են Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կողմից 2012 թվականի մայիսի 16-ի թիվ 45 որոշմամբ հաստատված ներմուծման կամ արտահանման արգելքները կամ սահմանափակումները:

պայմանագրի պատճենը, իսկ պայմանագրի բացակայության դեպքում՝ Կողմերի մտադրությունները հաստատող այլ փաստաթղթի պատճենը:

հանքային հումքի արդյունահանման օրինակակազմումը հաստատող՝ անդամ պետության օրենսդրությամբ նախատեսված փաստաթղթերի պատճենները:

հանքային հումքի տիրապետման օրինակակազմումը հաստատող փաստաթղթերի պատճենները:

Հանքային հումքի արդյունահանման պետություն չհանդիսացող անդամ պետության տարածքից հանքային հումքի արտահանման դեպքում հայտատուն՝ որպես հանքային հումքի արդյունահանման օրինակակազմումը հաստատող փաստաթղթեր, ներկայացնում է եզրակացություն (թույլատրագիր), որը տրամադրվել է այն անդամ պետության՝ եզրակացություններ (թույլատրագրեր) տրամադրելու համար լիազորված մարմնի կողմից, որի տարածքում արդյունահանվել է այդ հանքային հումքը:

15. Սույն Հիմնադրույթի 9-րդ կետի հիմնված պարբերությամբ նախատեսված եզրակացություն (թույլատրագիր) ստանալու համար հայտատուն ներկայացնում է հետևյալ փաստաթղթերն այն անդամ պետության՝ եզրակացություններ (թույլատրագրեր) տրամադրելու համար լիազորված մարմնի, որի տարածքում արդյունահանվել է հանքային հումքը՝

- ա) սույն Հիմնադրույթի 14-րդ կետի երկրորդ պարբերության մեջ նշված եզրակացության (թույլատրագրի) նախագիծը.
- բ) արտաքին առևտրային գործունեության մասնակիցների միջև հանքային հումքի առքուվաճառքի պայմանագրի պատճենը, որի կողմերից մեկն այն անդամ պետության արտաքին առևտրային գործունեության մասնակից է, որի տարածքում արդյունահանվել է այդ հանքային հումքը:

16. Եզրակացության (թույլատրագրի) տրամադրումը մերժվում է հետևյալ հիմքերի առկայության դեպքում՝

ա) հայտատուի կողմից սույն Հիմնադրույթի համապատասխանաբար 14-րդ և 15-րդ կետերով նախատեսված փաստաթղթերը չեն ներկայացնելը:

բ) եզրակացություն (թույլատրագիր) ստանալու համար ներկայացված փաստաթղթերում թերի կամ անարժանահավատ տեղեկությունների առկայությունը:

գ) անդամ պետությունների օրենսդրությամբ նախատեսված այլ հիմքեր:

ՀԱՒԵՆԱՍ ԹԻՎ 5  
Եվրասիական տնտեսական  
հանձնաժողովի կողմից  
2015 թվականի ապրիլի 21-ի  
թիվ 30 որոշման

**Հ Ի Ն Ա Դ Դ ՈՒ Յ Ց**

**մաքսային միության մաքսային տարածքից կենդանի վայրի կենդանիների, առանձին վայրի բույսերի ու վայրի դեղահումքի արտահանման կարգի վերաբերյալ**

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅՆԵՐ

1. Սույն Հիմնադրույթով սահմանվում է այն կենդանի վայրի կենդանիները, առանձին վայրի բույսերն ու վայրի դեղահումքը Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածքից արտահանելու (այսուհետ համապատասխանաբար՝ արտահանում, Միություն) կարգը, որոնց տեսակները ներառված են այն Ապրանքների միասնական ցանկի 2.6 բաժնում, որոնց նկատմամբ երրորդ երկրների հետ առևտրի ժամանակ կիրառվում են «Երրորդ երկրների առևտրային ոչ սակազնային կարգավորման միջոցների մասին» արձանագրությամբ նախատեսված ոչ սակազնային կարգավորման միջոցները («Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի թիվ 7 հավելված) (այսուհետ՝ կենդանի վայրի կենդանիներ և (կամ) վայրի բույսեր):

Եթե նշված միասնական ցանկի 2.6 բաժնում ներառված՝ կենդանի վայրի կենդանիների և (կամ) վայրի բույսերի տեսակը ներառված է նաև այդ միասնական ցանկի 2.7 բաժնում, ապա համապատասխան կենդանի վայրի կենդանիների և (կամ) վայրի բույսերի արտահանումն իրականացվում է առանց լիցենզիայի ձևակերպման՝ «միևտացման եզրին գտնվող վայրի կենդանական ու բուսական աշխարհի տեսակների միջազգային առևտրի մասին» 1973 թվականի մարտի 3-ի կոնվենցիայով նախատեսված կարգին համապատասխան:

2. Սույն Հիմնադրույթում գործածվող հասկացությունները կիրառվում են «Երրորդ երկրների առևտրային ոչ սակազնային կարգավորման միջոցների մասին» արձանագրությամբ («Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի 7-րդ հավելված) և Միության իրավունքի մաս կազմող միջազգային պայմանագրերով սահմանված իմաստներով:

3. Կենդանի վայրի կենդանիների և (կամ) վայրի բույսերի արտահանումն իրականացվում է Ապրանքների առանձին տեսակների արտահանման և (կամ) ներմուծման համար լիցենզիա ստանալու մասին հայտի ձևակերպմանն ու Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կողմից 2014 թվականի նոյեմբերի 6-ի թիվ 199 որոշմամբ հաստատված այդպիսի լիցենզիայի ձևակերպմանն առնչվող հրահանգին համապատասխան ձևակերպված լիցենզիայի (այսուհետ՝ լիցենզիա) կամ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի 2012 թվականի մայիսի 16-ի թիվ 45 որոշմամբ հաստատված ձևով կազմված եզրակացության (այսուհետ՝ եզրակացություն (թույլատրագիր)) առկայության դեպքում՝ բացառությամբ սույն Հիմնադրույթի 7-րդ կետով նախատեսված դեպքերի:

Փիտակա հաստատությունների կողմից կենդանի վայրի կենդանիների և (կամ) վայրի բույսերի նմուշների արտահանումը գիտական հետազոտությունների համար, ինչպես նաև կենդանաբանական այգիների, տնկարանների ու բուսաբանական այգիների կողմից կենդանի վայրի կենդանիների և (կամ) վայրի բույսերի արտահանումը կենդանական, նվիրատվության ու գենաֆոնդի համալրման նպատակով իրականացվում է եզրակացության (թույլատրագրի) առկայության դեպքում՝ բացառությամբ սույն Հիմնադրույթի 7-րդ կետով նախատեսված դեպքերի:

4. Ֆիզիկական անձանց կողմից կենդանի վայրի կենդանիների և (կամ) վայրի բույսերի արտահանումը՝ որպես անձնական օգտագործման ապրանքներ, իրականացվում է եզրակացության (թույլատրագրի) առկայության դեպքում:

Չի պահանջվում եզրակացություն (թույլատրագիր) ստանալ ֆիզիկական անձանց կողմից որպես անձնական օգտագործման ապրանքներ կենդանի վայրի կենդանիների և (կամ) վայրի բույսերի եզակի նմուշների մեկ տեսակը՝ երեք օրինակից ոչ ավելի, ինչպես նաև տոճենու ընկույզները կճեպով՝ մեկ կգ.-ից ոչ ավելի, և տոճենու ընկույզներն առանց կճեպի՝ 0,5 կգ.-ից ոչ ավելի արտահանելու դեպքում:

Ֆիզիկական անձանց կողմից՝ ավելի վաղ Միության մաքսային տարածք ներմուծված կենդանի վայրի կենդանիների և (կամ) վայրի բույսերի արտահանումը՝ որպես անձնական օգտագործման ապրանքներ, իրականացվում է Միության անդամ պետության (այսուհետ՝ անդամ պետություն) մաքսային մարմնի Միության մաքսային տարածք կենդանի վայրի կենդանիների և (կամ) վայրի բույսերի ներմուծման ժամանակ ձևակերպված ուղևորային մաքսային հայտարարագիր ներկայացնելու դեպքում, որը պարունակում է դրանց նույնականացման հատկանիշները (անվանումը, տեսակը, ինչպես նաև սեռն ու տարիքը՝ կենդանիների դեպքում) (այդպիսի տեղեկությունների առկայության դեպքում):

Նշված ուղևորային մաքսային հայտարարագրի բացակայության դեպքում ֆիզիկական անձանց կողմից կենդանի վայրի կենդանիների և (կամ) վայրի բույսերի արտահանումը՝ որպես անձնական օգտագործման ապրանքներ, իրականացվում է եզրակացություններ (թույլատրագրեր) տրամադրելու համար անդամ պետության օրենսդրությանը համապատասխան լիազորված՝ անդամ պետության պետական իշխանության մարմնի կողմից

(այսուհետ՝ անդամ պետության՝ եզրակացություններ (թույլատրագրեր) տրամադրելու համար լիազորված մարմնի) տրամադրված եզրակացության (թույլատրագրի) կամ այդ մարմնի կողմից այն մասին, որ համապատասխան կենդանի վայրի կենդանիների և (կամ) վայրի բույսերի արտահանման համար եզրակացություն (թույլատրագիր) չի պահանջվում գրավոր ծանուցման առկայության դեպքում:

II. Մաքսային ընթացակարգերով ձևակերպումը

5. Կենդանի վայրի կենդանիների և (կամ) վայրի բույսերի «արտահանում» մաքսային ընթացակարգով ձևակերպումն իրականացվում

Ե անդամ պետության մաքսային մարմին լիցենզիա, իսկ սույն Հիմնադրույթի 3-րդ կետի երկրորդ պարբերությամբ նախատեսված դեպքերում անդամ պետության մաքսային մարմին եզրակացություն (թույլատրագիր) ներկայացվելու դեպքում:

6. Կենդանի վայրի կենդանիների և (կամ) բույսերի «ժամանակավոր ներմուծում» ու «մաքսային տարածքից դուրս վերամշակում» մաքսային ընթացակարգերով ձևակերպումն իրականացվում է անդամ պետության մաքսային մարմին եզրակացություն (թույլատրագիր) ներկայացվելու դեպքում:

7. Կենդանի վայրի կենդանիների և (կամ) բույսերի «արտահանում» ու «մաքսային տարածքում» մաքսային ընթացակարգերով ձևակերպումն իրականացվում է առանց անդամ պետության մաքսային մարմին լիցենզիա կամ եզրակացություն (թույլատրագիր) ներկայացնելու:

8. Չի թույլատրվում կենդանի վայրի կենդանիները և (կամ) վայրի բույսերը ձևակերպել «անմաքս առևտուր» մաքսային ընթացակարգով:

### III. Լիցենզիայի տրամադրումը

9. Իրավաբանական անձինք և որպես անհատ ձեռնարկատեր գրանցված ֆիզիկական անձինք (այսուհետ՝ հայտատուներ) լիցենզիայի ձևակերպման համար «Ապրանքների արտահանման և (կամ) ներմուծման լիցենզիաների ու թույլտվությունների տրամադրման կանոններ» («Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի 7-րդ հավելվածի հավելված) (այսուհետ՝ Կանոններ) 10-րդ կետի 1-5-րդ ենթակետերում նշված փաստաթղթերն ու տեղեկությունները ներկայացնում են այն անդամ պետության լիազորված մարմին, որի տարածքում է գրանցված հայտատուն:

Կանոնների 10-րդ կետի 6-րդ ենթակետին համապատասխան՝ հայտատուները ներկայացնում են նաև կենդանի վայրի կենդանիների և (կամ) վայրի բույսերի մթերման, հավաքման, ձեռքբերման կամ որսման և (կամ) տնօրինման օրինականությունը հաստատող փաստաթղթեր:

Կենդանի վայրի կենդանիները և (կամ) վայրի բույսերն այդ կենդանի վայրի կենդանիների և (կամ) վայրի բույսերի մթերման, հավաքման, ձեռքբերման կամ որսման և (կամ) տնօրինման պետություն չհանդիսացող անդամ պետության տարածքից արտահանելու դեպքում հայտատուն՝ որպես կենդանի վայրի կենդանիների և (կամ) վայրի բույսերի մթերման, հավաքման, ձեռքբերման կամ որսման և (կամ) տնօրինման օրինականությունը հաստատող փաստաթղթեր ներկայացնում է այն անդամ պետության՝ եզրակացություններ (թույլատրագրեր) տրամադրելու համար լիազորված մարմնի կողմից տրամադրված եզրակացությունը (թույլատրագիրը), որի տարածքում իրականացվել են կենդանի վայրի կենդանիների և (կամ) վայրի բույսերի մթերումը, հավաքումը, ձեռքբերումը կամ որսումը:

Երրորդ երկրներից ներմուծված կենդանի վայրի կենդանիների և (կամ) վայրի բույսերի արտահանման դեպքում որպես մթերման, հավաքման, ձեռքբերման կամ որսման և (կամ) տնօրինման օրինականությունը հաստատող փաստաթղթեր ներկայացվում է ապրանքների մասին այն հայտարարագրի պատճենը, որին համապատասխան իրականացվել է կենդանի վայրի կենդանիները և (կամ) վայրի բույսերը շրջանառության մեջ դնելը, կամ Միության մաքսային տարածքում այդ հանքային հումքի գտնվելու օրինականությունը հաստատող՝ անդամ պետության դատարանի որոշումը:

10. Հայտատուի կողմից ներկայացվող փաստաթղթերի պատճենները պետք է վավերացված լինեն Կանոնների 11-րդ կետով սահմանված կարգով:

11. Եթե անդամ պետության օրենսդրությանը համապատասխան լիցենզիա տրամադրելու մասին որոշումը լիազորված մարմնի կողմից ընդունվում է պետական իշխանության այլ մարմնի (այսուհետ՝ համաձայնեցնող մարմին) հետ համաձայնեցմամբ, ապա այդ համաձայնեցումն իրականացվում է տվյալ անդամ պետության օրենսդրությամբ նախատեսված կարգով:

Հայտատուի կողմից համաձայնեցնող մարմին են ներկայացվում սույն Հիմնադրույթի 9-րդ կետում նշված փաստաթղթերը, եթե դա նախատեսված է անդամ պետության օրենսդրությամբ: Ընդ որում, սույն Հիմնադրույթի 9-րդ կետի երրորդ և չորրորդ պարբերությունների մեջ նշված փաստաթղթերը չեն ներկայացվում լիազորված մարմին:

Համաձայնեցումը կարող է իրականացվել եզրակացություն (թույլատրագիր) տրամադրելու միջոցով:

12. Լիցենզիայի տրամադրումը մերժվում է Կանոնների 14-րդ կետի 1-4-րդ ենթակետերով նախատեսված հիմքերի առկայության դեպքում, ինչպես նաև Կանոնների 14-րդ կետի 6-րդ ենթակետին համապատասխան՝ համաձայնեցնող մարմնի՝ լիցենզիայի տրամադրման մասին հայտի համաձայնեցումը մերժելու դեպքում:

### IV. Եզրակացության (թույլատրագրի) տրամադրումը

13. Եզրակացության (թույլատրագրի) տրամադրումն իրականացվում է անդամ պետության՝ եզրակացություններ (թույլատրագրեր) տրամադրելու համար լիազորված մարմնի կողմից՝ տվյալ անդամ պետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

14. Եզրակացությունը (թույլատրագիրը) տրամադրվում է անդամ պետության՝ եզրակացություններ (թույլատրագրեր) տրամադրելու համար լիազորված մարմնի հետևյալ փաստաթղթերն ու տեղեկությունները ներկայացնելու դեպքում՝

ա) հայտատուի կողմից՝

այն Ապրանքների միասնական ցանկում ներառված առանձին ապրանքների ներմուծման, արտահանման և տարանցման վերաբերյալ եզրակացության (թույլատրագրի) միասնական ձևը լրացնելու վերաբերյալ մեթոդական ցուցումներին համապատասխան ձևակերպված եզրակացության (թույլատրագրի) նախագիծը, որոնք նկատմամբ Եվրասիական տնտեսական համայնքի շրջանակներում մաքսային միության անդամ պետությունների կողմից երրորդ երկրների հետ առևտրում կիրառվում են Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կողմից 2012 թվականի մայիսի 16-ի թիվ 45 որոշմամբ հաստատված ներմուծման կամ արտահանման արգելքները կամ սահմանափակումները:

պայմանագրի պատճենը, իսկ պայմանագրի բացակայության դեպքում՝ Կողմերի մտադրությունները հաստատող այլ փաստաթղթի պատճենը:

հարկային մարմնում հաշվառվելու մասին փաստաթղթի օրինակը,

կենդանի վայրի կենդանիների և (կամ) վայրի բույսերի մթերման, հավաքման, ձեռքբերման կամ որսման և (կամ) տնօրինման օրինականությունը հաստատող փաստաթղթերի պատճենները, որոնք վավերացվել են սույն Հիմնադրույթի 10-րդ կետին համապատասխան: Կենդանի վայրի կենդանիները և (կամ) վայրի բույսերը այդ կենդանի վայրի կենդանիների և (կամ) վայրի բույսերի մթերման, հավաքման, ձեռքբերման կամ որսման և (կամ) տնօրինման պետություն չհանդիսացող անդամ պետության տարածքից արտահանելու դեպքում՝ որպես կենդանի վայրի կենդանիների և (կամ) վայրի բույսերի մթերման, հավաքման, ձեռքբերման կամ որսման և (կամ) տնօրինման օրինականությունը հաստատող փաստաթղթեր, ներկայացնում են այն անդամ պետության՝ եզրակացություններ (թույլատրագրեր) տրամադրելու համար լիազորված մարմնի կողմից տրամադրված եզրակացությունը (թույլատրագիրը), որի տարածքում իրականացվել են կենդանի վայրի կենդանիների և (կամ) վայրի բույսերի մթերումը, հավաքումը, ձեռքբերումը կամ որսումը:

Երրորդ երկրներից ներմուծված կենդանի վայրի կենդանիների և (կամ) վայրի բույսերի արտահանման դեպքում որպես մթերման, հավաքման, ձեռքբերման կամ որսման և (կամ) տնօրինման օրինականությունը հաստատող փաստաթղթեր, ներկայացվում են ապրանքների մասին այն հայտարարագրի պատճենը, որին համապատասխան իրականացվել է կենդանի վայրի կենդանիները և (կամ) վայրի բույսերը շրջանառության մեջ դնելը, կամ Միության մաքսային տարածքում այդ հանքային հումքի գտնվելու օրինականությունը հաստատող՝ անդամ պետության դատարանի որոշումը:

անդամ պետության օրենսդրությամբ նախատեսված այլ փաստաթղթեր:

բ) ֆիզիկական անձի կողմից կենդանի վայրի կենդանիները և (կամ) վայրի բույսերը որպես անձնական օգտագործման ապրանքներ արտահանելու դեպքում՝

սույն կետի «ա» ենթակետի երկրորդ պարբերության մեջ նշված մեթոդական ցուցումներին համապատասխան ձևակերպված եզրակացության (թույլատրագրի) նախագիծը:

անձը հաստատող փաստաթղթերի պատճենները կամ տեղեկություններ անձը հաստատող փաստաթղթերից (սերիան, համարը, երբ և ում կողմից է տրվել, անձնական համարը (առկայության դեպքում), բնակության վայրի հասցեն), եթե դա նախատեսված է անդամ պետությունների օրենսդրությամբ:

Վայրի կենդանիների և (կամ) վայրի բույսերի մթերման, հավաքման, ձեռքբերման կամ որսման և (կամ) տնօրինման օրինականությունը հաստատող փաստաթղթերի պատճենները, որոնք վավերացվել են սույն Հիմնադրույթի 10-րդ կետին համապատասխան: Կենդանի վայրի կենդանիները և (կամ) վայրի բույսերը այդ կենդանի վայրի կենդանիների և (կամ) վայրի բույսերի մթերման, հավաքման, ձեռքբերման կամ որսման և (կամ) տնօրինման պետություն չհանդիսացող անդամ պետության տարածքից արտահանելու դեպքում՝ որպես կենդանի վայրի կենդանիների և (կամ) վայրի բույսերի մթերման, հավաքման, ձեռքբերման կամ որսման և (կամ) տնօրինման օրինականությունը հաստատող փաստաթղթեր՝ ֆիզիկական անձը ներկայացնում է այն անդամ պետության՝ եզրակացություններ (թույլատրագրեր) տրամադրելու համար լիազորված մարմնի կողմից տրամադրված եզրակացությունը (թույլատրագիրը), որի տարածքում իրականացվել են կենդանի վայրի կենդանիների և (կամ) վայրի բույսերի մթերումը, հավաքումը, ձեռքբերումը կամ որսումը:

անդամ պետության օրենսդրությամբ նախատեսված այլ փաստաթղթեր:

15. Սույն Հիմնադրույթի 9-րդ կետով նախատեսված եզրակացություն (թույլատրագիր) ստանալու համար այն անդամ պետության՝ եզրակացություններ (թույլատրագրեր) տրամադրելու համար լիազորված մարմնի ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը, որի տարածքում իրականացվել են կենդանի վայրի կենդանիների և (կամ) վայրի բույսերի մթերումը, հավաքումը, ձեռքբերումը կամ որսումը՝

ա) սույն Հիմնադրույթի 14-րդ կետի «ա» ենթակետի երկրորդ պարբերության մեջ նշված մեթոդական ցուցումներին համապատասխան ձևակերպված եզրակացության (թույլատրագրի) նախագիծը:

բ) արտաքին առևտրային գործունեության մասնակիցների միջև կենդանի վայրի կենդանիների և (կամ) վայրի բույսերի առցանց առևտրային պայմանագրի պատճենը, որի կողմերից մեկն այն անդամ պետության արտաքին առևտրային գործունեության մասնակից է, որի տարածքում իրականացվել են կենդանի վայրի կենդանիների և (կամ) վայրի բույսերի մթերումը, հավաքումը, ձեռքբերումը կամ որսումը:

16. Եզրակացության (թույլատրագրի) տրամադրումը մերժվում է հետևյալ հիմքերի առկայության դեպքում՝

ա) սույն Հիմնադրույթի համապատասխանաբար 14-րդ և 15-րդ կետերով նախատեսված փաստաթղթերը չեն ներկայացվել:

բ) եզրակացություն (թույլատրագրի) ստանալու համար ներկայացված փաստաթղթերում թերի կամ անարժանահավատ տեղեկությունների առկայությունը:

գ) անդամ պետությունների օրենսդրությամբ նախատեսված այլ հիմքեր:

ՀԱՎԵԼՎԱԾ ԹԻՎ 6  
Եվրասիական տնտեսական  
հանձնաժողովի կոնգրեսի  
2015 թվականի ապրիլի 21-ի  
թիվ 30 որոշման

## ՀԻՄՆԱԴՐՈՒՅԹ

### Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածքից հազվագյուտ և անհետացման վտանգի տակ գտնվող կենդանի վայրի կենդանիների և վայրի բույսերի այնպիսի տեսակների արտահանման մասին, որոնք ներառված են Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների կարմիր գրքերում:

#### I. Ընդհանուր դրույթներ

1. Սույն Հիմնադրույթով սահմանվում է հազվագյուտ և անհետացման վտանգի տակ գտնվող կենդանի վայրի կենդանիների և վայրի բույսերի այն տեսակները Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածքից արտահանելու (այսուհետ՝ համապատասխանաբար՝ արտահանում, Միություն) կարգը, որոնք ներառված են Միության անդամ պետությունների (այսուհետ՝ անդամ պետություններ) կարմիր գրքերում և այն Ապրանքների միասնական ցանկի 2.8 բաժնում, որոնք նկատմամբ երրորդ երկրների հետ առևտրի ժամանակ կիրառվում են «Երրորդ երկրների առևտրային ոչ սակագնային կարգավորման միջոցների մասին» արձանագրությամբ նախատեսված ոչ սակագնային կարգավորման միջոցները («Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի թիվ 7 հավելված) (այսուհետ՝ կենդանի հազվագյուտ վայրի կենդանիներ և (կամ) վայրի բույսեր):

Եթե նշված միասնական ցանկի 2.8 բաժնում ներառված կենդանի հազվագյուտ վայրի կենդանիների և (կամ) վայրի բույսերի տեսակը ներառված է նաև այդ միասնական ցանկի 2.7 բաժնում, ապա համապատասխան կենդանի վայրի կենդանիների և (կամ) վայրի բույսերի արտահանումն իրականացվում է առանց լիցենզիայի ձևակերպման՝ «Անհետացման եզրին գտնվող վայրի կենդանական ու բուսական աշխարհի տեսակների միջազգային առևտրի մասին» 1973 թվականի մարտի 3-ի կոնվենցիայով նախատեսված կարգին համապատասխան:

2. Սույն Հիմնադրույթում գործածվող հասկացությունները կիրառվում են «Երրորդ երկրների առևտրային ոչ սակագնային կարգավորման միջոցների մասին» արձանագրությամբ («Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի 7-րդ հավելված) և Միության իրավունքի մաս կազմող միջազգային պայմանագրերով սահմանված իմաստներով:

3. Կենդանի հազվագյուտ վայրի կենդանիների և (կամ) վայրի բույսերի արտահանումն իրականացվում է ապրանքների առանձին տեսակների արտահանման և (կամ) ներմուծման լիցենզիա ստանալու համար հայտի ձևակերպման և Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոնգրեսի 2014 թվականի նոյեմբերի 6-ի թիվ 199 որոշմամբ հաստատված այդպիսի լիցենզիայի (այսուհետ՝ լիցենզիա) ձևակերպման վերաբերյալ իրահանգներին համապատասխան ձևակերպված լիցենզիայի կամ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոնգրեսի 2012 թվականի մայիսի 16-ի թիվ 45 որոշմամբ հաստատված ձևով կազմված եզրակացության (թույլատրագրի) (այսուհետ՝ եզրակացություն (թույլատրագրի)) առկայության դեպքում՝ բացառությամբ սույն Հիմնադրույթի 7-րդ կետով նախատեսված դեպքերի:

4. Ֆիզիկական անձանց կողմից կենդանի հազվագյուտ վայրի կենդանիների և (կամ) վայրի բույսերի արտահանումը՝ որպես անձնական օգտագործման ապրանքներ, իրականացվում է եզրակացության (թույլատրագրի) առկայության դեպքում:

Ֆիզիկական անձանց կողմից՝ ավելի վաղ Միության մաքսային տարածք ներմուծված կենդանի հազվագյուտ վայրի կենդանիների և (կամ) վայրի բույսերի արտահանումը՝ որպես անձնական օգտագործման ապրանքներ, իրականացվում է անդամ պետության մաքսային մարմին՝ Միության մաքսային տարածք կենդանի հազվագյուտ վայրի կենդանիների և (կամ) վայրի բույսերի ներմուծման ժամանակ ձևակերպված ուղևորային մաքսային հայտարարագիրը ներկայացնելու դեպքում, որը պարունակում է դրանց նույնականացման հատկանիշները (անվանումը, տեսակը, ինչպես նաև սեռն ու տարիքը՝ կենդանիների դեպքում (այդպիսի տեղեկությունների առկայության դեպքում)):

Նշված ուղևորային մաքսային հայտարարագրի բացակայության դեպքում ֆիզիկական անձանց կողմից կենդանի հազվագյուտ վայրի կենդանիների և (կամ) վայրի բույսերի արտահանումը՝ որպես անձնական օգտագործման ապրանքներ, իրականացվում է անդամ պետության պետական իշխանության՝ անդամ պետության օրենսդրությանը համապատասխան եզրակացություններ (թույլատրագրեր) տրամադրելու համար լիազորված մարմնի կողմից (այսուհետ՝ անդամ պետության՝ եզրակացություններ (թույլատրագրեր) տրամադրելու համար լիազորված մարմին) տրամադրված եզրակացության (թույլատրագրի) կամ այդ մարմնի կողմից այն մասին, որ համապատասխան կենդանի հազվագյուտ վայրի կենդանիների և (կամ) վայրի բույսերի արտահանման համար գրավոր ծանուցման առկայության դեպքում եզրակացություն (թույլատրագրի) չի պահանջվում:

#### II. Մաքսային ընթացակարգերով ձևակերպելը

5. Կենդանի հազվագյուտ վայրի կենդանիները և (կամ) վայրի բույսերը «արտահանում» մաքսային ընթացակարգով ձևակերպելու իրականացվում է անդամ պետության մաքսային մարմնի լիցենզիա ներկայացնելու դեպքում:

6. Կենդանի հազվագյուտ վայրի կենդանիները և (կամ) բույսերը «ժամանակավոր ներմուծում» ու «մաքսային տարածքից դուրս վերամշակում» մաքսային ընթացակարգերով ձևակերպելու իրականացվում է անդամ պետության մաքսային մարմնի եզրակացություն (թույլատրագրի) ներկայացնելու դեպքում:

7. Կենդանի հազվագյուտ վայրի կենդանիները և (կամ) բույսերը «արտահանում» ու «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգերով ձևակերպելու իրականացվում է՝ առանց անդամ պետության մաքսային մարմնի լիցենզիա կամ եզրակացություն (թույլատրագրի) ներկայացնելու:

8. Չի թույլատրվում կենդանի հազվագյուտ վայրի կենդանիները և (կամ) վայրի բույսերը ձևակերպել «անմաքս առևտուր» մաքսային ընթացակարգով:

#### III. Լիցենզիայի տրամադրումը

9. Իրավաբանական անձինք և որպես անհատ ձեռնարկատեր գրանցված ֆիզիկական անձինք (այսուհետ՝ հայտատուներ) լիցենզիայի ձևակերպման համար «Ապրանքների արտահանման և (կամ) ներմուծման լիցենզիաների ու թույլատրությունների տրամադրման կանոններ» («Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի 7-րդ հավելված) հավելված) (այսուհետ՝ Կանոններ) 10-րդ կետի 1-5-րդ ենթակետերում նշված փաստաթղթերն ու տեղեկությունները ներկայացնում են այն անդամ պետության լիազորված մարմնին, որի տարածքում է գրանցված հայտատուն:

Կանոնների 10-րդ կետի 6-րդ ենթակետին համապատասխան՝ հայտատուները ներկայացնում են կենդանի հազվագյուտ վայրի կենդանիների և (կամ) վայրի բույսերի մթերման, հավաքման, ձեռքբերման կամ որսման և (կամ) տնօրինման օրինակառությունը ներկայացնում են կենդանի հազվագյուտ վայրի կենդանիների և (կամ) վայրի բույսերի մթերման, հավաքման, ձեռքբերման կամ որսման և (կամ) տնօրինման օրինակառությունը հաստատող փաստաթղթերը ներկայացնում են հաստատող փաստաթղթեր:

Կենդանի հազվագյուտ վայրի կենդանիները և (կամ) վայրի բույսերը այդ կենդանի հազվագյուտ վայրի կենդանիների և (կամ) վայրի բույսերի մթերման, հավաքման, ձեռքբերման կամ որսման և (կամ) տնօրինման պետություն չհանդիսացող անդամ պետության տարածքից արտահանելու դեպքում հայտատուն՝ որպես կենդանի հազվագյուտ վայրի կենդանիների և (կամ) վայրի բույսերի մթերման, հավաքման, ձեռքբերման կամ որսման և (կամ) տնօրինման օրինակառությունը հաստատող փաստաթղթեր ներկայացնում է այն անդամ պետության՝ եզրակացություններ (թույլատրագրեր) տրամադրելու համար լիազորված մարմնի կողմից տրամադրված եզրակացությունը (թույլատրագիրը), որի տարածքում մթերվել, հավաքվել, ձեռք են բերվել կամ որսվել են այդ կենդանի հազվագյուտ վայրի կենդանիները և (կամ) վայրի բույսերը:

Երրորդ երկրներից ներմուծված կենդանի հազվագյուտ վայրի կենդանիների և (կամ) վայրի բույսերի արտահանման դեպքում որպես մթերման, հավաքման, ձեռքբերման կամ որսման և (կամ) տնօրինման օրինակառությունը հաստատող փաստաթղթեր ներկայացվում են ապրանքների մասին այն հայտարարագրի պատճենը, որին համապատասխան իրականացվել է կենդանի հազվագյուտ վայրի

կենդանիները և (կամ) վայրի բույսերը շրջանառության մեջ դնելը, կամ Միության մաքսային տարածքում այդ կենդանի հազվագյուտ վայրի կենդանիների և (կամ) վայրի բույսերի գտնվելու օրինակակառուցումը հաստատող՝ անդամ պետության դատարանի որոշումը:

10. Հայտատուի կողմից ներկայացվող փաստաթղթերի պատճենները պետք է վավերացված լինեն Կանոնների 11-րդ կետով սահմանված կարգով:

11. Եթե անդամ պետության օրենսդրությանը համապատասխան լիցենզիա տրամադրելու մասին որոշումը լիազորված մարմնի կողմից ընդունվում է տվյալ անդամ պետության պետական իշխանության այլ մարմնի (այսուհետ՝ համաձայնեցնող մարմին) հետ համաձայնեցմամբ, ապա այդ համաձայնեցումն իրականացվում է տվյալ անդամ պետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Հայտատուի կողմից համաձայնեցնող մարմին են ներկայացվում սույն Հիմնադրույթի 9-րդ կետում նշված փաստաթղթերը, եթե դա նախատեսված է անդամ պետության օրենսդրությամբ: Ընդ որում, սույն Հիմնադրույթի 9-րդ կետի երրորդ և չորրորդ պարբերություններում նշված փաստաթղթերը չեն ներկայացվում լիազորված մարմին:

Համաձայնեցումը կարող է իրականացվել եզրակացություն (թույլատրագիր) տրամադրելու միջոցով:

12. Լիցենզիայի տրամադրումը մերժվում է Կանոնների 14-րդ կետի 1-4-րդ ենթակետերով նախատեսված հիմքերի առկայության դեպքում, ինչպես նաև Կանոնների 14-րդ կետի 6-րդ ենթակետին համապատասխան՝ համաձայնեցնող մարմնի՝ լիցենզիայի տրամադրման մասին հայտի համաձայնեցումը մերժելու դեպքում:

#### IV. Եզրակացության (թույլատրագրի) տրամադրումը

13. Եզրակացության (թույլատրագրի) տրամադրումն իրականացվում է անդամ պետության՝ եզրակացություններ (թույլատրագրեր) տրամադրելու համար լիազորված մարմնի կողմից՝ տվյալ անդամ պետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

14. Եզրակացությունը (թույլատրագիրը) տրամադրվում է անդամ պետության՝ եզրակացություններ (թույլատրագրեր) տրամադրելու համար լիազորված մարմնի հետևյալ փաստաթղթերն ու տեղեկությունները ներկայացնելու դեպքում՝

ա) հայտատուի կողմից՝

այն Ապրանքների միասնական ցանկում ներառված առանձին ապրանքների ներմուծման, արտահանման և տարանցման վերաբերյալ եզրակացության (թույլատրագրի) միասնական ձևը լրացնելու վերաբերյալ մեթոդական ցուցումներին համապատասխան ձևակերպված եզրակացության (թույլատրագրի) նախագիծը, որոնք նկատմամբ Եվրասիական տնտեսական համայնքի շրջանակներում Մաքսային միության անդամ պետությունների կողմից երրորդ երկրների հետ առևտրում կիրառվում են Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոնցեզիայի 2012 թվականի մայիսի 16-ի թիվ 45 որոշմամբ հաստատված ներմուծման կամ արտահանման արգելքները կամ սահմանափակումները:

պայմանագրի պատճենը, իսկ պայմանագրի բացակայության դեպքում՝ Կողմերի մտադրությունները հաստատող այլ փաստաթղթի պատճենը:

հարկային մարմնում հաշվառվելու մասին փաստաթղթի օրինակը,

կենդանի հազվագյուտ վայրի կենդանիների և (կամ) վայրի բույսերի մթերման, հավաքման, ձեռքբերման կամ որսման և (կամ) տնօրինման օրինակակառուցումը հաստատող փաստաթղթերի պատճենները, որոնք վավերացվել են սույն Հիմնադրույթի 10-րդ կետին համապատասխան: Կենդանի հազվագյուտ վայրի կենդանիները և (կամ) վայրի բույսերն այդ կենդանի հազվագյուտ վայրի կենդանիների և (կամ) վայրի բույսերի մթերման, հավաքման, ձեռքբերման կամ որսման և (կամ) տնօրինման օրինակակառուցումը հաստատող փաստաթղթեր, ներկայացնում է այն անդամ պետության՝ եզրակացություններ (թույլատրագրեր) տրամադրելու համար լիազորված մարմնի կողմից տրամադրված եզրակացությունը (թույլատրագիրը), որի տարածքում իրականացվել են այդ կենդանի հազվագյուտ վայրի կենդանիների և (կամ) վայրի բույսերի մթերումը, հավաքումը, ձեռքբերումը կամ որսումը:

Երրորդ երկրներից ներմուծված կենդանի հազվագյուտ վայրի կենդանիների և (կամ) վայրի բույսերի արտահանման դեպքում՝ որպես մթերման, հավաքման, ձեռքբերման կամ որսման և (կամ) տնօրինման օրինակակառուցումը հաստատող փաստաթղթեր, ներկայացվում են ապրանքների մասին այն հայտարարագրի պատճենը, որին համապատասխան իրականացվել է կենդանի հազվագյուտ վայրի կենդանիների և (կամ) վայրի բույսերի շրջանառության մեջ դնելը, կամ Միության մաքսային տարածքում այդ կենդանի հազվագյուտ վայրի կենդանիների և (կամ) վայրի բույսերի գտնվելու օրինակակառուցումը հաստատող՝ անդամ պետության դատարանի որոշումը:

անդամ պետության օրենսդրությամբ նախատեսված այլ փաստաթղթեր:

բ) Ֆիզիկական անձի կողմից կենդանի հազվագյուտ վայրի կենդանիները և (կամ) վայրի բույսերը որպես անձնական օգտագործման ապրանքներ արտահանելու դեպքում՝

սույն կետի «ա» ենթակետի երկրորդ պարբերության մեջ նշված մեթոդական ցուցումներին համապատասխան ձևակերպված

եզրակացության (թույլատրագրի) նախագիծը:

անձը հաստատող փաստաթղթերի պատճենները կամ տեղեկություններ անձը հաստատող փաստաթղթերից (սերիան, համարը, երբ և ում կողմից է տրվել, անձնական համարը (առկայության դեպքում), բնակության վայրի հասցեն), եթե դա նախատեսված է անդամ պետությունների օրենսդրությամբ:

կենդանի հազվագյուտ վայրի կենդանիների և (կամ) վայրի բույսերի մթերման, հավաքման, ձեռքբերման կամ որսման և (կամ) տնօրինման օրինակակառուցումը հաստատող փաստաթղթերի պատճենները, որոնք վավերացվել են սույն Հիմնադրույթի 10-րդ կետին համապատասխան: Կենդանի հազվագյուտ վայրի կենդանիները և (կամ) վայրի բույսերն այդ կենդանի հազվագյուտ վայրի կենդանիների և (կամ) վայրի բույսերի մթերման, հավաքման, ձեռքբերման կամ որսման և (կամ) տնօրինման օրինակակառուցումը հաստատող փաստաթղթեր, ներկայացնում է այն անդամ պետության՝ եզրակացություններ (թույլատրագրեր) տրամադրելու համար լիազորված մարմնի կողմից տրամադրված եզրակացությունը (թույլատրագիրը), որի տարածքում իրականացվել են այդ կենդանի հազվագյուտ վայրի կենդանիների և (կամ) վայրի բույսերի մթերումը, հավաքումը, ձեռքբերումը կամ որսումը:

անդամ պետության օրենսդրությամբ նախատեսված այլ փաստաթղթեր:

15. Սույն Հիմնադրույթի 9-րդ կետի երրորդ պարբերությամբ նախատեսված եզրակացություն (թույլատրագիր) ստանալու համար այն անդամ պետության՝ եզրակացություններ (թույլատրագրեր) տրամադրելու համար լիազորված մարմնին են ներկայացնում հետևյալ փաստաթղթերը, որի տարածքում իրականացվել են կենդանի հազվագյուտ վայրի կենդանիների և (կամ) վայրի բույսերի մթերումը, հավաքումը, ձեռքբերումը կամ որսումը՝

ա) սույն Հիմնադրույթի 14-րդ կետի «ա» ենթակետի երկրորդ պարբերության մեջ նշված մեթոդական ցուցումներին

համապատասխան ձևակերպված եզրակացության (թույլատրագրի) նախագիծը:

բ) արտաքին առևտրային գործունեության մասնակիցների միջև կենդանի հազվագյուտ վայրի կենդանիների և (կամ) վայրի բույսերի առևտրային գործունեության մասնակից Է, որի տարածքում իրականացվել են կենդանի հազվագյուտ վայրի կենդանիների և (կամ) վայրի բույսերի մթերումը, հավաքումը, ձեռքբերումը կամ որսումը:

16. Եզրակացության (թույլատրագրի) տրամադրումը մերժվում է հետևյալ հիմքերի առկայության դեպքում՝

ա) սույն Հիմնադրույթի համապատասխանաբար 14-րդ և 15-րդ կետերով նախատեսված փաստաթղթերը չեն ներկայացնել:

բ) եզրակացություն (թույլատրագիր) ստանալու համար ներկայացված փաստաթղթերում թերի կամ անարժանահավատ

տեղեկությունների առկայությունը:

գ) անդամ պետությունների օրենսդրությամբ նախատեսված այլ հիմքեր:

ՀԱՎԵԼԱԾ ԹԻՎ 7  
Եվրասիական տնտեսական  
հանձնաժողովի կոնցեզիայի  
2015 թվականի ապրիլի 21-ի  
թիվ 30 որոշման

#### Հ Ի Մ Ա Դ Դ ՈՒ Ց Ց

### Վտանգավոր թափոնները Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածք ներմուծելու և Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածքից արտահանելու մասին

#### I. Ընդհանուր դրույթներ

1. Սույն Հիմնադրույթով սահմանվում է այն Ապրանքների միասնական ցանկի 2.3 բաժնում ներառված վտանգավոր թափոնները Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածք ներմուծելու (այսուհետ՝ համապատասխանաբար՝ ներմուծում, Միություն) կարգը, որոնք նկատմամբ երրորդ երկրների հետ առևտրի ժամանակ կիրառվում են «Երրորդ երկրների առևտրային գործունեության մասնակիցներին» արձանագրությամբ նախատեսված ոչ սակագնային կարգավորման միջոցները («Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի թիվ 7 հավելված) (այսուհետ՝ միասնական ցանկ) և

միասնական ցանկի 1.2 և 2.3 բաժիններում ներառված վտանգավոր թափոնները Միության մաքսային տարածքից արտահանելու կարգը (այսուհետ՝ սույն Հիմնադրույթի նպատակով՝ «իրավասու մարմին» ասելով պետք է հասկանալ Միության անդամ պետության (այսուհետ՝ անդամ պետություն)՝ վտանգավոր թափոնների ներմուծման, արտահանման ու տարանցման վերաբերյալ ծանուցում, ինչպես նաև այդպիսի ներմուծմանը, արտահանմանն ու տարանցմանն առնչվող ցանկացած տեղեկություն ուղարկելու ու ստանալու համար պատասխանատու պետական մարմին՝ «վտանգավոր թափոնների անդրահամանային փոխադրման և դրանց հեռացման նկատմամբ հսկողություն սահմանելու մասին» 1989 թվականի մարտի 22-ի Բազեյան կոնվենցիային համապատասխան (այսուհետ՝ Բազեյան կոնվենցիա)):

Սույն Հիմնադրույթում գործածվող մյուս հասկացությունները կիրառվում են Բազեյան կոնվենցիայով, «Երրորդ երկրների առևտրությամբ ոչ սակագնային կարգավորման միջոցների մասին» արձանագրությամբ («Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի 7-րդ հավելված) և Միության իրավունքի մաս կազմող միջազգային պայմանագրերով սահմանված իմաստներով:

2. Արգելվում է իրականացնել՝

ա) ֆիզիկական անձանց կողմից վտանգավոր թափոնների ներմուծում և (կամ) արտահանում որպես անձնական օգտագործման ապրանքներ:

բ) միասնական ցանկի 1.2 բաժնում ներառված վտանգավոր թափոնների ներմուծում:

գ) միասնական ցանկի 1.2 և 2.3 բաժիններում ներառված վտանգավոր թափոնների արտահանում Բազեյան կոնվենցիայի կողմ չհանդիսացող պետության տարածք, ինչպես նաև միասնական ցանկի 2.3 բաժնում ներառված վտանգավոր թափոնների ներմուծում Բազեյան կոնվենցիայի կողմ չհանդիսացող պետության տարածքից՝ բացառությամբ այն դեպքի, երբ անդամ պետությունը և Բազեյան կոնվենցիայի կողմ չհանդիսացող պետությունը վտանգավոր թափոնների անդրահամանային տեղափոխման մասին կնքել են միջազգային պայմանագիր (Բազեյան կոնվենցիայի կողմ հանդիսացող պետությունների, ինչպես նաև կնքված միջազգային պայմանագրերի վերաբերյալ տեղեկությունները տեղադրված են «Ինտերնետ» տեղեկատվական-հեռահաղորդակցության ցանցի՝ Բազեյան կոնվենցիայի պաշտոնական կայքում՝ հետևյալ հասցեով <http://www.basel.int>)։ Այդ դեպքում վտանգավոր թափոնների տեղափոխումն իրականացվում է՝ սույն Հիմնադրույթին և Բազեյան կոնվենցիային համապատասխան:

դ) միասնական ցանկի 2.3 բաժնում ներառված վտանգավոր թափոնների ներմուծում՝ թաղման և (կամ) վնասագրծման նպատակով:

4. Վտանգավոր թափոնների ներմուծումը և (կամ) արտահանումը իրականացվում է Ապրանքների առանձին տեսակների արտահանման և (կամ) ներմուծման համար լիցենզիա ստանալու մասին հայտի ձևակերպմանն ու եվրասիական տնտեսական հանձնաժողովի կողմից 2014 թվականի նոյեմբերի 6-ի թիվ 199 որոշմամբ հաստատված այդպիսի լիցենզիայի ձևակերպմանն առնչվող հրահանգին համապատասխան ձևակերպված լիցենզիայի (այսուհետ՝ լիցենզիա) կամ եվրասիական տնտեսական հանձնաժողովի 2012 թվականի մայիսի 16-ի թիվ 45 որոշմամբ հաստատված ձևով կազմված եզրակացության (այսուհետ՝ եզրակացություն (թույլատրագիր))՝ առևտրության դեպքում՝ բացառությամբ սույն Հիմնադրույթի 3-րդ կետով նախատեսված դեպքերի:

Լիցենզիան կամ եզրակացությունը (թույլատրագիրը) ներկայացվում է անդամ պետությունների մաքսային մարմիններ Միության մաքսային տարածք վտանգավոր թափոնների ժամանման դեպքում:

## II. Մաքսային ընթացակարգերով ձևակերպելը

5. Վտանգավոր թափոնները «ներքին սպառման համար բացթողում» և «արտահանում» մաքսային ընթացակարգերով ձևակերպելու իրականացվում է անդամ պետության մաքսային մարմին լիցենզիա ներկայացնելու դեպքում:

6. Վտանգավոր թափոնները «վերամշակում՝ ներքին սպառման համար», «վերամշակում՝ մաքսային տարածքում», «վերամշակում՝ մաքսային տարածքից դուրս», «վերաներմուծում», «վերարտահանում» մաքսային ընթացակարգերով ձևակերպելու իրականացվում է անդամ պետության մաքսային մարմին եզրակացություն (թույլատրագիր) ներկայացնելու դեպքում:

7. Վտանգավոր թափոնները «մաքսային պահեստ», ժամանման վայրում մաքսային մարմնից Միության մաքսային տարածք՝ մինչև ներքին մաքսային մարմին փոխադրելու, ինչպես նաև ներքին մաքսային մարմնից մինչև Միության մաքսային տարածքից մեկնման վայրի մաքսային մարմին փոխադրելու նպատակով «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով ձևակերպելու իրականացվում է վտանգավոր թափոններն այլ մաքսային ընթացակարգերով ձևակերպելու համար ներկայացված լիցենզիայի կամ եզրակացության (թույլատրագրի) առկայության դեպքում:

8. Վտանգավոր թափոնները ժամանման վայրում մաքսային մարմնից Միության մաքսային տարածք՝ մինչև Միության մաքսային տարածքից մեկնման վայրում մաքսային մարմին դրանք փոխադրման համար «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով ձևակերպելու իրականացվում է անդամ պետության մաքսային մարմին այն բոլոր անդամ պետությունների պետական իշխանության՝ անդամ պետության օրենսդրությանը համապատասխան եզրակացություններ (թույլատրագրեր) տրամադրելու համար լիազորված մարմնի կողմից (այսուհետ՝ անդամ պետությունների՝ եզրակացություններ (թույլատրագրեր) տրամադրելու համար լիազորված մարմիններ) տրամադրված եզրակացություն (թույլատրագիր) ներկայացնելու դեպքում, որոնց տարածքով իրականացվելու է այդ վտանգավոր թափոնների փոխադրումը:

9. Չի թույլատրվում վտանգավոր թափոնները ձևակերպել «ժամանակավոր ներմուծում (ընդունում)», «ժամանակավոր ներմուծում», «անմաքս առևտուր», «ընչացում», «հրաժարում՝ հօգուտ պետության», «ազատ մաքսային գույք», «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգերով:

## III. Լիցենզիայի տրամադրումը

10. Իրավաբանական անձինք և որպես անհատ ձեռնարկատեր գրանցված ֆիզիկական անձինք (այսուհետ՝ հայտատուներ) լիցենզիայի ձևակերպման համար «Ապրանքների արտահանման և (կամ) ներմուծման լիցենզիաների ու թույլտվությունների տրամադրման կանոնների» («Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի 7-րդ հավելվածի հավելված) (այսուհետ՝ Կանոններ) 10-րդ կետի 1-5-րդ ենթադրույթներով նախատեսված փաստաթղթերն ու տեղեկությունները, ինչպես նաև Կանոնների 10-րդ կետի 6-րդ ենթադրույթին համապատասխան հետևյալ փաստաթղթերն ու տեղեկությունները ներկայացնում են այն անդամ պետության լիազորված մարմին, որի տարածքում է գրանցված հայտատուն՝

ա) այն պետության իրավասու մարմնի համաձայնությունը (գրավոր), որի տարածք են ներմուծվում վտանգավոր թափոնները և (կամ) որի տարածքով տեղափոխվում են վտանգավոր թափոնները՝ Բազեյան կոնվենցիային համապատասխան (վտանգավոր թափոնների արտահանման դեպքում):

բ) վտանգավոր թափոններն արտահանողի և արտադրողի կամ ներմուծողի և սպառողի միջև կնքված պայմանագրի պատճենը (եթե հայտատուն հանդես է գալիս որպես միջնորդ):

գ) վտանգավոր թափոնների փոխադրման մասին պայմանագրի (պայմանագրերի) պատճենները:

դ) արտահանողի (ներմուծողի) և վտանգավոր թափոնների հեռացման համար պատասխանատու անձի միջև պայմանագրի պատճենը, որով, որպես կանխապայման, սահմանվում է այդ վտանգավոր թափոնների Էկոլոգիային անվտանգ օգտագործումը:

ե) վտանգավոր թափոնների՝ Բազեյան կոնվենցիային համապատասխան անդրահամանային փոխադրման մասին ծանուցումը (3 օրինակից):

զ) թափոնների՝ Բազեյան կոնվենցիային համապատասխան փոխադրման մասին ծանուցումը (3 օրինակից):

է) վտանգավոր թափոններն օգտագործելու տեխնիկական (տեխնոլոգիական) հնարավորությունների առկայության վերաբերյալ տեղեկություններ (քաղվածք վտանգավոր թափոնները որպես հումք օգտագործելու հնարավորությունը հաստատող տեխնոլոգիական կանոնակարգից կամ այլ վտանգավոր թափոնների կամ դրանց մնացորդների գոյացությունը բացառող օգտագործման մեջ դրանք ներգրավելու հնարավորությունը հաստատող այլ փաստաթուղթ) (վտանգավոր թափոնների ներմուծման դեպքում):

ը) վտանգավոր թափոնների անդրահամանային փոխադրման դեպքում ապահովագրությունը, գրավը կամ այլ երաշխիք հաստատող փաստաթղթի պատճենը (եթե դա նախատեսված է անդամ պետության օրենսդրությամբ):

թ) անդամ պետության տարածքում վտանգավոր թափոնների շրջանառության հետ կապված գործունեության իրականացման լիցենզիայի պատճենը՝ այդ անդամ պետության օրենսդրությանը համապատասխան (եթե գործունեության տվյալ տեսակի լիցենզավորումը նախատեսված է այդ պետության օրենսդրությամբ):

11. Հայտատուի կողմից ներկայացվող փաստաթղթերի պատճենները պետք է վավերացված լինեն Կանոնների 11-րդ կետով սահմանված կարգով:

12. Եթե անդամ պետության օրենսդրությանը համապատասխան լիցենզիա տրամադրելու մասին որոշումը լիազորված մարմնի կողմից ընդունվում է տվյալ անդամ պետության պետական իշխանության այլ մարմնի (այսուհետ՝ համաձայնեցնող մարմին) հետ համաձայնեցմամբ, սպա այդ համաձայնեցումն իրականացվում է տվյալ անդամ պետության օրենսդրությամբ նախատեսված կարգով:

Հայտատուի կողմից համաձայնեցնող մարմին են ներկայացվում սույն Հիմնադրույթի 10-րդ կետում նշված փաստաթղթերը, եթե դա նախատեսված է անդամ պետության օրենսդրությամբ: Ընդ որում, սույն Հիմնադրույթի 10-րդ կետի «ա»-«թ» ենթակետերում նշված փաստաթղթերը չեն ներկայացվում լիազորված մարմին:

Համաձայնեցումը կարող է իրականացվել եզրակացություն (թույլատրագիր) տրամադրելու միջոցով:

13. Լիցենզիայի տրամադրումը մեթոծվում է Կանոնների 14-րդ կետի 1-4-րդ ենթակետերով նախատեսված հիմքերի առկայության դեպքում, ինչպես նաև Կանոնների 14-րդ կետի 6-րդ ենթակետին համապատասխան՝ համաձայնեցնող մարմնի՝ լիցենզիայի տրամադրման մասին հայտի համաձայնեցումը մեթոծվում դեպքում:

IV. Եզրակացության (թույլատրագրի) տրամադրումը

14. Եզրակացության (թույլատրագրի) տրամադրումն իրականացվում է անդամ պետության՝ եզրակացություններ (թույլատրագրեր) տրամադրելու համար լիազորված մարմնի կողմից՝ տվյալ անդամ պետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

15. Եզրակացությունը (թույլատրագիրը) տրամադրվում է հայտատուի կողմից անդամ պետության՝ եզրակացություններ (թույլատրագրեր) տրամադրելու համար լիազորված մարմնի հետևյալ փաստաթղթերն ու տեղեկությունները ներկայացվելու դեպքում՝ ա) այն Ապրանքների միասնական ցանկում ներառված առանձին ապրանքների ներմուծման, արտահանման և տարանցման վերաբերյալ եզրակացության (թույլատրագրի) միասնական ձևը լրացնելու վերաբերյալ մեթոդական ցուցումներին համապատասխան ձևակերպված եզրակացության (թույլատրագրի) նախագիծը, որոնց նկատմամբ Եվրասիական տնտեսական համայնքի շրջանակներում Մաքսային միության անդամ պետությունների կողմից երրորդ երկրների հետ առևտրում կիրառվում են Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կողմից 2012 թվականի մայիսի 16-ի թիվ 45 որոշմամբ հաստատված ներմուծման կամ արտահանման արգելքներ և սահմանափակումներ:

բ) պայմանագրի պատճենը, իսկ պայմանագրի բացակայության դեպքում՝ Կողմերի մտադրությունները հաստատող այլ փաստաթղթի պատճենը:

գ) այն պետության իրավասու մարմնի համաձայնությունը (գրավոր), որի տարածք են ներմուծվում վտանգավոր թափոնները և (կամ) որի տարածքով տեղափոխվում են վտանգավոր թափոնները՝ Բազեյան կոնվենցիային համապատասխան (վտանգավոր թափոնների արտահանման դեպքում):

դ) վտանգավոր թափոններն արտահանողի և արտադրողի կամ ներմուծողի և սպառողի միջև կնքված պայմանագրի պատճենը (եթե հայտատուն հանդես է գալիս որպես միջնորդ):

ե) վտանգավոր թափոնների փոխադրման մասին պայմանագրի (պայմանագրերի) պատճենները:

զ) արտահանողի (ներմուծողի) և վտանգավոր թափոնների հեռացման համար պատասխանատու անձի միջև պայմանագրի պատճենը, որով, որպես կանխապայման, սահմանվում է այդ վտանգավոր թափոնների Էկոլոգիապես անվտանգ օգտագործումը:

է) վտանգավոր թափոնների՝ Բազեյան կոնվենցիային համապատասխան անդրասահմանային փոխադրման մասին ծանուցումը (3 օրինակից):

ը) թափոնների՝ Բազեյան կոնվենցիային համապատասխան փոխադրման մասին ծանուցումը (3 օրինակից):

թ) վտանգավոր թափոններն օգտագործելու տեխնիկական (տեխնոլոգիական) հնարավորությունների առկայության վերաբերյալ տեղեկություններ (քաղվածք՝ վտանգավոր թափոնները որպես հումք օգտագործելու հնարավորությունը հաստատող տեխնոլոգիական կանոնակարգից կամ այլ վտանգավոր թափոնների կամ դրանց մնացորդների գոյացությունը բացառող օգտագործման մեջ դրանք ներգրավելու հնարավորությունը հաստատող այլ փաստաթուղթ) (վտանգավոր թափոնների ներմուծման դեպքում):

ժ) վտանգավոր թափոնների անդրասահմանային փոխադրման դեպքում ապահովագրությունը, գրավը կամ այլ երաշխիքը հաստատող փաստաթղթի պատճենը (եթե դա նախատեսված է անդամ պետության օրենսդրությամբ):

ժա) անդամ պետության տարածքում վտանգավոր թափոնների շրջանառության հետ կապված գործունեության իրականացման լիցենզիայի պատճենը՝ այդ անդամ պետության օրենսդրությանը համապատասխան (եթե գործունեության տվյալ տեսակի լիցենզավորումը նախատեսված է այդ պետության օրենսդրությամբ):

ժբ) անդամ պետության օրենսդրությամբ նախատեսված այլ փաստաթղթեր:

16. Եզրակացության (թույլատրագրի) տրամադրումը մերժվում է հետևյալ հիմքերի առկայության դեպքում՝

ա) սույն Հիմնադրույթի 15-րդ կետով նախատեսված փաստաթղթերը չեն ներկայացվել:

բ) եզրակացություն (թույլատրագիր) ստանալու համար ներկայացված փաստաթղթերում թերի կամ ոչ արժանահավատ տեղեկությունների առկայությունը:

գ) անդամ պետությունների օրենսդրությամբ և Բազեյան կոնվենցիայով նախատեսված այլ հիմքեր:

17. Վտանգավոր թափոնների ներմուծման և (կամ) արտահանման վերաբերյալ հաշվետվությունը, Բազեյան կոնվենցիայի 6-րդ հոդվածին համապատասխան, հայտատուների կողմից ներկայացվում է իրենց պետության իրավասու մարմնի՝ այդ պետության օրենսդրությամբ սահմանված կարգով ու ժամկետներում:

ՀԱՎԵԼԱԾ ԹԻՎ 8  
Եվրասիական տնտեսական  
հանձնաժողովի կողմից  
2015 թվականի ապրիլի 21-ի  
թիվ 30 որոշման

Հ Ի Մ Ա Ղ Դ ՈՒ Ց Ց

**մշակութային արժեքները, ազգային արխիվային ֆոնդերի փաստաթղթերը և արխիվային փաստաթղթերի բնօրինակները Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածքից արտահանելու մասին**

**I. Ընդհանուր դրույթներ**

1. Սույն Հիմնադրույթով սահմանվում է այն Ապրանքների միասնական ցանկի 2.20 բաժնում ներառված մշակութային արժեքները, ազգային արխիվային ֆոնդերի փաստաթղթերը և արխիվային փաստաթղթերի բնօրինակները Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածքից արտահանելու (այսուհետ համապատասխանաբար՝ արտահանում, Միություն) կարգը, որոնց նկատմամբ երրորդ երկրների հետ առևտրի ժամանակ կիրառվում են «Երրորդ երկրների առևտրային արգելումները ոչ սակագնային կարգավորման միջոցների մասին» արձանագրությամբ նախատեսված ոչ սակագնային կարգավորման միջոցները («Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի թիվ 7 հավելված):

2. Սույն Հիմնադրույթի նպատակներով գործածվող հասկացություններն ունեն հետևյալ իմաստը՝  
«հնաճ (անտիկվար) զենք»՝ մինչև 1899 թվականի ավարտն արտադրված հրազեն, նետողական և օդանշնչի (պնևմատիկ) զենք (բացառությամբ կենտրոնադիր զարկով միասնական փամփուշտներով կրակելու համար արտադրված հրազենից), ինչպես նաև մինչև 1945 թվականի ավարտն արտադրված սառը զենք:

«մշակութային արժեք ունեցող, սակայն անտիկվար զենքի շարքին չդասվող զենք»՝ հրազեն, որն արտադրված է 1900-1945 թվականներին և սառը զենք, որն արտադրված է 50 և ավելի տարի առաջ:

«համաձայնեցնող մարմին»՝ Միության անդամ պետության պետական իշխանության մարմին, որն իրականացնում է մշակութային արժեքների արտահանման կարգավորումը և այդ պետության օրենսդրությանը համապատասխան՝ լիազորված է լիցենզիաներ համաձայնեցնելու ու եզրակացություններ (թույլատրագրեր) տրամադրելու համար:

Սույն Հիմնադրույթով գործածվող մյուս հասկացությունները կիրառվում են «Երրորդ երկրների առևտրային արգելումները ոչ սակագնային կարգավորման միջոցների մասին» արձանագրությամբ («Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի 7-րդ հավելված) և Միության իրավունքի մաս կազմող միջազգային պայմանագրերով սահմանված իմաստներով:

3. Մշակութային արժեքների արտահանումն իրականացվում է Ապրանքների առանձին տեսակների արտահանման և (կամ) ներմուծման համար լիցենզիա ստանալու մասին հայտի ձևակերպման և Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կողմից 2014 թվականի նոյեմբերի 6-ի թիվ 199 որոշմամբ հաստատված այդպիսի լիցենզիայի ձևակերպման առևտրային հրահանգին համապատասխան ձևակերպված լիցենզիայի (այսուհետ՝ լիցենզիա) կամ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի 2012 թվականի մայիսի 16-ի թիվ 45 որոշմամբ հաստատված ձևով կազմված եզրակացության (այսուհետ՝ եզրակացություն (թույլատրագիր)) առկայության դեպքում՝ բացառությամբ մշակութային արժեքների արտահանումը՝ սույն Հիմնադրույթի 10-րդ կետին համապատասխան:

4. Ֆիզիկական անձանց կողմից մշակութային արժեքների արտահանումը՝ որպես անձնական օգտագործման ապրանքներ, իրականացվում է եզրակացության (թույլատրագրի) առկայության դեպքում:

5. Ֆիզիկական անձանց կողմից մշակութային արժեք ունեցող, սակայն անտիկվար զենքի շարքին չդասվող զենքը որպես անձնական օգտագործման ապրանք արտահանելու դեպքում՝ ի հավելումն համաձայնեցնող մարմնի կողմից տրամադրված եզրակացության (թույլատրագրի)՝ Միության անդամ պետության (այսուհետ՝ անդամ պետություն) մաքսային մարմնի ներկայացվում է եզրակացություն (թույլատրագիր), որը տրամադրվել է անդամ պետության պետական իշխանության՝ զենքի շրջանառության ոլորտում հսկողություն իրականացնող մարմնի (այսուհետ՝ զենքի շրջանառության ոլորտում հսկողություն իրականացնող մարմնի) կողմից՝ «Քաղաքացիական և ծառայողական զենքը, դրա հիմնական (բաղկացուցիչ) մասերն ու փամփուշտները Մաքսային միության մաքսային տարածք ներմուծելու, Մաքսային միության մաքսային տարածքից արտահանելու և Մաքսային միության մաքսային տարածքով տարանցելու կարգի մասին» հիմնադրույթին (Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կողմից 2012 թվականի օգոստոսի 16-ի թիվ 134 որոշմամբ հաստատված՝ սահմանափակումների մասին հիմնադրույթներ) (այսուհետ՝ «Քաղաքացիական և ծառայողական զենքի ներմուծման և արտահանման մասին» հիմնադրույթ) համապատասխան:

6. Ֆիզիկական անձանց կողմից ավելի վաղ Միության մաքսային տարածք ժամանակավոր ներմուծված մշակութային արժեքները որպես անձնական օգտագործման ապրանքներ արտահանելու իրականացվում է անդամ պետության մաքսային մարմնի մշակութային արժեքների ներմուծման ժամանակ ձևակերպված ուղևորային մաքսային հայտարարագիր ներկայացնելու դեպքում, որը պարունակում է ևշված մշակութային արժեքների նույնականացման հատկանիշները (անվանումը, հեղինակը, ստեղծման տարին, ստեղծման նյութն ու

տեխնիկական, չափսերը, լարային աղեղնավոր երաժշտական գործիքների դեպքում՝ երաժշտական գործիքի անձնագիրը (առկայության դեպքում):

Մշակութային արժեքները՝ որպես անձնական օգտագործման ապրանքներ ներմուծելու ժամանակ ձևակերպված ուղևորային մաքսային հայտարարագրի բացակայության դեպքում ֆիզիկական անձանց կողմից մշակութային արժեքները որպես անձնական օգտագործման ապրանքներ արտահանելն իրականացվում է համաձայնեցնող մարմնի կողմից տրամադրված եզրակացության (թույլատրագրի) կամ համաձայնեցնող մարմնի կողմից այն մասին, որ համապատասխան մշակութային արժեքների արտահանման համար գրավոր ծանուցման առկայության դեպքում եզրակացություն (թույլատրագիր) չի պահանջվում:

## II. Մաքսային ընթացակարգերով ձևակերպելը

7. Մշակութային արժեքները «արտահանում» մաքսային ընթացակարգով ձևակերպելն իրականացվում է անդամ պետության մաքսային մարմնի լիցենզիա ներկայացնելու դեպքում:

8. Մշակութային արժեքները դրանց վերանորոգման (վերականգնման) նպատակով «ժամանակավոր արտահանում», ինչպես նաև «վերամշակում» մաքսային տարածքից դուրս» մաքսային ընթացակարգերով ձևակերպելն իրականացվում է անդամ պետության մաքսային մարմնի եզրակացություն (թույլատրագիր) ներկայացնելու դեպքում:

9. Ֆիզիկական անձանց կողմից մշակութային արժեք ունեցող, սակայն անտիկվար գեղեցիկ շարքին չդասվող գեղեցիկ «ժամանակավոր արտահանում» և «վերամշակում» մաքսային տարածքից դուրս» մաքսային ընթացակարգերով ձևակերպելն իրականացվում է անդամ պետության մաքսային մարմնի համաձայնեցնող մարմնի կողմից տրամադրված եզրակացություն (թույլատրագիր) ու «Ձեռքի շրջանառության ոլորտում հսկողություն իրականացնող մարմնի կողմից քաղաքացիական և ծառայողական գեղեցիկ ներմուծման ու արտահանման մասին» հիմնադրույթին համապատասխան տրամադրված եզրակացություն (թույլատրագիր) ներկայացնելու դեպքում:

10. Չի պահանջվում անդամ պետության մաքսային մարմնի ներկայացնել լիցենզիա կամ եզրակացություն (թույլատրագիր) մշակութային արժեքները «վերաարտահանում» և «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգերով ձևակերպելու դեպքում:

11. Չի թույլատրվում մշակութային արժեքները ձևակերպել «ժամանակավոր ներմուծում» և «անմաքս առևտուր» մաքսային ընթացակարգերով:

## III. Լիցենզիայի տրամադրումը

12. Իրավաբանական անձինք և որպես անհատ ձեռնարկատեր գրանցված ֆիզիկական անձինք (այսուհետ՝ հայտատուներ) լիցենզիայի ձևակերպման համար «Ապրանքների արտահանման և (կամ) ներմուծման լիցենզիաների ու թույլտվությունների տրամադրման կանոնների» («Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի 7-րդ հավելվածի հավելված) (այսուհետ՝ Կանոններ) 10-րդ կետի 1-5-րդ ենթակետերով նախատեսված փաստաթղթերն ու տեղեկությունները, ինչպես նաև Կանոնների 10-րդ կետի 6-րդ ենթակետին համապատասխան հետևյալ փաստաթղթերն ու տեղեկությունները ներկայացնում են այն անդամ պետության լիցենզիայի մարմնի, որի տարածքում է գրանցված հայտատուն՝

ա) արտահանվող մշակութային արժեքների ցուցակը (գույքացուցակը) երկու օրինակով:  
բ) «Ձեռքի շրջանառության ոլորտում հսկողություն իրականացնող մարմնի կողմից քաղաքացիական և ծառայողական գեղեցիկ ներմուծման ու արտահանման մասին» հիմնադրույթին համապատասխան տրամադրված եզրակացություն (թույլատրագիր)՝ մշակութային արժեք ունեցող, սակայն անտիկվար գեղեցիկ շարքին չդասվող գեղեցիկ արտահանման դեպքում:

գ) անդամ պետության օրենսդրությամբ նախատեսված այլ փաստաթղթեր:  
13. Հայտատուի կողմից ներկայացվող փաստաթղթերի պատճենները պետք է վավերացված լինեն Կանոնների 11-րդ կետով սահմանված կարգով:

14. Եթե անդամ պետության օրենսդրությանը համապատասխան լիցենզիա տրամադրելու մասին որոշումն ընդունվում է անդամ պետության լիցենզիայի մարմնի կողմից՝ համաձայնեցնող մարմնի հետ համաձայնեցմամբ, ապա այդ համաձայնեցումն իրականացվում է տվյալ անդամ պետության օրենսդրությամբ նախատեսված կարգով:

Հայտատուի կողմից համաձայնեցնող մարմնի են ներկայացվում սույն Հիմնադրույթի 12-րդ կետում նշված փաստաթղթերը, եթե դա նախատեսված է անդամ պետության օրենսդրությամբ: Ընդ որում, սույն Հիմնադրույթի 12-րդ կետի «ա»-«գ» ենթակետերում նշված փաստաթղթերը չեն ներկայացվում լիցենզիայի մարմնի:

Համաձայնեցումը կարող է իրականացվել եզրակացություն (թույլատրագիր) տրամադրելու միջոցով:

15. Լիցենզիայի տրամադրումը մերժվում է Կանոնների 14-րդ կետի 1-4-րդ ենթակետերով նախատեսված հիմքերի առկայության դեպքում, ինչպես նաև Կանոնների 14-րդ կետի 6-րդ ենթակետին համապատասխան՝ համաձայնեցնող մարմնի՝ լիցենզիայի տրամադրման մասին հայտի համաձայնեցումը մերժելու դեպքում:

## IV. Եզրակացության (թույլատրագրի) տրամադրումը

16. Եզրակացության (թույլատրագրի) տրամադրումն իրականացվում է համաձայնեցնող մարմնի կողմից:

17. Եզրակացությունը (թույլատրագիրը) տրամադրվում է հայտատուին այն պետության համաձայնեցնող մարմնի կողմից, որի տարածքում գրանցված է հայտատուն, ինչպես նաև մշակութային արժեքները որպես անձնական օգտագործման ապրանքներ արտահանող ֆիզիկական անձին:

18. Մշակութային արժեքների ժամանակավոր արտահանման ժամկետը որոշում է համաձայնեցնող մարմինը:

19. Եզրակացությունը (թույլատրագիրը) տրամադրվում է համաձայնեցնող մարմնի կամ անդամ պետության օրենսդրությամբ նախատեսված կազմակերպություն հետևյալ փաստաթղթերն ու տեղեկությունները ներկայացնելու դեպքում՝

ա) հայտատուի կողմից՝ հայտը (եթե դա նախատեսված է անդամ պետության օրենսդրությամբ) կամ այն Ապրանքների միասնական ցանկում ներառված առանձին ապրանքների ներմուծման, արտահանման և տարանցման վերաբերյալ եզրակացության (թույլատրագրի) միասնական ձևը լրացնելու վերաբերյալ մեթոդական ցուցումներին համապատասխան ձևակերպված եզրակացության (թույլատրագրի) նախագիծը, որոնց նկատմամբ Եվրասիական տնտեսական համայնքի շրջանակներում Մաքսային միության անդամ պետությունների կողմից երրորդ երկրների հետ առևտրում կիրառվում են Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կողմից 2012 թվականի մայիսի 16-ի թիվ 45 որոշմամբ հաստատված՝ ներմուծման կամ արտահանման արգելքներ կամ սահմանափակումներ:

անդամ պետության օրենսդրությամբ նախատեսված այլ փաստաթղթեր:

բ) Ֆիզիկական անձի կողմից մշակութային արժեքները որպես անձնական օգտագործման ապրանքներ արտահանելու դեպքում՝ հայտը (եթե դա նախատեսված է անդամ պետության օրենսդրությամբ) կամ սույն կետի «ա» ենթակետի երկրորդ պարբերության մեջ նշված մեթոդական ցուցումներին համապատասխան լրացված և ձևակերպված եզրակացության (թույլատրագրի) նախագիծը:

անձը հաստատող փաստաթղթերի պատճենները կամ տեղեկություններ անձը հաստատող փաստաթղթերից (սերիան, համարը, երբ և ում կողմից է տրվել, անձնական համարը (առկայության դեպքում), բնակության վայրի հասցեն), եթե դա նախատեսված է անդամ պետության օրենսդրությամբ:

անդամ պետության օրենսդրությամբ նախատեսված այլ փաստաթղթեր:

20. Եզրակացության (թույլատրագրի) տրամադրումը մերժվում է հետևյալ հիմքերի առկայության դեպքում՝

ա) սույն Հիմնադրույթի 19-րդ կետով նախատեսված փաստաթղթերը չեն ներկայացնել:

բ) Եզրակացություն (թույլատրագիր) ստանալու համար ներկայացված փաստաթղթերում թերի կամ ոչ արժանահավատ տեղեկությունների առկայությունը:

գ) անդամ պետությունների օրենսդրությամբ նախատեսված այլ հիմքեր:

ՀԱՒԵԼԱՄԵ ՁԻՎ 9  
Եվրասիական տնտեսական  
հանձնաժողովի կողմից  
2015 թվականի ապրիլի 21-ի  
թիվ 30 որոշման

## ՀԻՄՆԱԴՐՈՒՅՑ

**Ճանկագրման (կրիպտոգրաֆիկ) միջոցները Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածք ներմուծելու և Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածքից արտահանելու մասին**

### I. Ընդհանուր դրույթներ

1. Սույն Հիմնադրույթով սահմանվում է այն ապրանքների միասնական ցանկի 2.19 բաժնում ներառված՝ ծածկագրման (կրիպտոգրաֆիկ) միջոցներ և այդպիսի միջոցներ պարունակող ապրանքներ Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածք ներմուծելու (այսուհետ՝ արտահանում) կարգը, որոնց նկատմամբ երրորդ երկրների հետ առևտրի ժամանակ կիրառվում են «Երրորդ

երկրների առևտրային կարգավորման միջոցների մասին» արձանագրությամբ նախատեսված ոչ սակագնային կարգավորման միջոցները («Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի թիվ 7 հավելված) (այսուհետ՝ ծածկագրման (կրիպտոգրաֆիկ) միջոցներ):

2. Սույն Հիմնադրույթի նպատակներով գործածվող հասկացություններն ունեն հետևյալ իմաստը՝ «նոտիֆիկացիաների միասնական ռեեստր»՝ Միության անդամ պետությունների համաձայնեցնող մարմինների կողմից գրանցված ծանուցումների վերաբերյալ տեղեկությունների ցանկ, որը կազմվում է ըստ 1-ին հավելվածի ձևի և հրապարակվում է «Ինտերնետ» տեղեկատվական-հաղորդակցության ցանցում՝ Միության պաշտոնական կայքում:

«նոտիֆիկացիա»՝ 2-րդ հավելվածի համաձայն և «Ծածկագրման (կրիպտոգրաֆիկ) միջոցների և դրանք պարունակող ապրանքների բնութագրերի ծանուցման մասին» հիմնադրույթով սահմանված կարգով Միության անդամ պետության համաձայնեցնող մարմնի կողմից գրանցված՝ ապրանքների արտադրողի (արտադրողի կողմից լիազորված ներկայացուցչի) ծանուցումն ըստ 3-րդ հավելվածի ձևի, որը պարունակում է տեղեկություններ ծածկագրման (կրիպտոգրաֆիկ) միջոցներ հանդիսացող ապրանքների և դրանք պարունակող ապրանքների տեխնիկական ու կրիպտոգրաֆիկ բնութագրերի վերաբերյալ՝ 4-րդ հավելվածի համաձայն կազմված ցանկին համապատասխան:

«համաձայնեցնող մարմին»՝ Միության անդամ պետության պետական իշխանության՝ պետական (ազգային) անվտանգության ապահովման ոլորտի մարմին, որը, այդ պետության օրենսդրությամբ համապատասխան, լիազորված է լիցենզիաներ համաձայնեցնելու, եզրակացություններ (թույլատրագրեր) տրամադրելու և ծանուցումներ գրանցելու համար:

Սույն Հիմնադրույթով գործածվող մյուս հասկացությունները կիրառվում են «Երրորդ երկրների առևտրային ոչ սակագնային կարգավորման միջոցների մասին» արձանագրությամբ («Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի 7-րդ հավելված) և Միության իրավունքի մաս կազմող միջազգային պայմանագրերով սահմանված իմաստներով:

3. Այն ապրանքների միասնական ցանկի 2.19 բաժնում ներառված ապրանքները, որոնց նկատմամբ երրորդ երկրների հետ առևտրի ժամանակ կիրառվում են «Երրորդ երկրների առևտրային ոչ սակագնային կարգավորման միջոցների մասին» արձանագրությամբ նախատեսված ոչ սակագնային կարգավորման միջոցները («Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի թիվ 7 հավելված), ունեն ծածկագրման կրիպտոգրաֆիկ (գաղտնագրման) ֆունկցիաներ, եթե դրանք իրենց կազմում իրացնում կամ պարունակում են հետևյալ միջոցները (համակարգերը և համալիրները)՝

ա) ծածկագրման միջոցներ (ապարատային, ծրագրային և ապարատածրագրային միջոցներ, համակարգեր և կոմպլեքսներ, որոնք իրականացնում են տեղեկությունների կրիպտոգրաֆիկ փոխակերպման ալգորիթմներ և նախատեսված են տեղեկությունների ալիքներով փոխանցման և (կամ) դրա մշակման ու պահպանման ժամանակ չթույլատրված հասանելիությունից պաշտպանելու համար):

բ) նմանակեղծման (հիմնացիոն) պաշտպանության միջոցներ (ապարատային, ծրագրային և ապարատածրագրային միջոցներ, համակարգեր և կոմպլեքսներ, որոնք իրականացնում են տեղեկությունների կրիպտոգրաֆիկ փոխակերպման ալգորիթմները և նախատեսված են սխալ տեղեկությունները պարտադրելուց պաշտպանելու համար):

գ) էլեկտրոնային վճարի ստորագրության (էլեկտրոնային ստորագրություն) միջոցներ, որոնք սահմանվում են Միության անդամ պետությունների (այսուհետ՝ անդամ պետություններ) օրենսդրությամբ համապատասխան:

դ) ապարատային, ծրագրային և ապարատածրագրային միջոցներ, այնպիսի համակարգեր ու կոմպլեքսներ, որոնք իրականացնում են տեղեկությունների կրիպտոգրաֆիկ փոխակերպման ալգորիթմները՝ ձեռքի գործողությունների միջոցով այդպիսի փոխակերպման մասի իրականացմամբ կամ այդպիսի գործողությունների հիման վրա ավտոմատացված միջոցների օգտագործմամբ:

ե) ապարատային, ծրագրային և ապարատածրագրային միջոցներ, համակարգեր և կոմպլեքսներ, որոնք իրականացնում են տեղեկությունների կրիպտոգրաֆիկ փոխակերպման ալգորիթմներն ու նախատեսված են առանցքային փաստաթղթեր պատրաստելու համար (անկախ առանցքային տեղեկատվության կրիչ տեսակից):

զ) ապարատային, ծրագրային և ապարատածրագրային միջոցներ, համակարգեր և կոմպլեքսներ, որոնք մշակված կամ մոդիֆիկացված են կրիպտոնալիզի ֆունկցիաներ կատարելու համար:

է) ապարատային, ծրագրային և ապարատածրագրային միջոցներ, համակարգեր և կոմպլեքսներ, որոնք իրականացնում են տեղեկությունների կրիպտոգրաֆիկ փոխակերպման ալգորիթմներ, մշակված կամ մոդիֆիկացված են լայնացող սպեկտրով համակարգերի համար լայնացող ծածկագրի գեներացիայի կրիպտոգրաֆիկ մեթոդների կիրառման համար՝ ներառյալ հաճախակառուցումների ցատկաձև վերականգնումը համակարգերի համար, ծածկագրերի ցատկաձև վերականգնումը:

ը) ապարատային, ծրագրային և ապարատածրագրային միջոցներ, համակարգեր և կոմպլեքսներ, որոնք իրականացնում են տեղեկությունների կրիպտոգրաֆիկ փոխակերպման ալգորիթմներ, մշակված կամ մոդիֆիկացված են ըստ ժամանակի մոդուլացված գերլայնաշերտ համակարգերի համար ալիքների կամ գաղտնիացնող ծածկագրերի ձևավորման կրիպտոգրաֆիկ մեթոդների կիրառման համար:

4. Եթե ծածկագրման (կրիպտոգրաֆիկ) միջոցներն իրենց կազմում պարունակում են այն Ապրանքների միասնական ցանկի 2.16 բաժնում ներառված ռադիոէլեկտրոնային միջոցներ և (կամ) քաղաքացիական նշանակության բարձր հաճախակառուցման սարքեր, որոնց նկատմամբ Եվրասիական տնտեսական համայնքի շրջանակներում Մաքսային միության անդամ պետությունների կողմից երրորդ երկրների հետ առևտրում կիրառվում են Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կողմից 2012 թվականի օգոստոսի 16-ի թիվ 134 որոշմամբ (այսուհետ՝ Միասնական ցանկ) հաստատված ներմուծման կամ արտահանման արգելքներ կամ սահմանափակումներ, կամ եթե ծածկագրման (կրիպտոգրաֆիկ) միջոցները մտնում են այդպիսի ռադիոէլեկտրոնային միջոցների և (կամ) քաղաքացիական նշանակության բարձր հաճախակառուցման սարքերի կազմի մեջ, ապա այդպիսի ապրանքների ներմուծումն իրականացվում է՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կողմից 2012 թվականի օգոստոսի 16-ի թիվ 134 որոշմամբ հաստատված սահմանափակումների կիրառման մասին հիմնադրույթներին («Քաղաքացիական նշանակության ռադիոէլեկտրոնային միջոցները և (կամ) բարձր հաճախակառուցման սարքավորումները, այդ թվում՝ ներկառուցվածները կամ այլ ապրանքների կազմի մեջ մտնողները մաքսային միության մաքսային տարածք ներմուծելու կարգի մասին» հիմնադրույթ) համապատասխան:

Եթե ծածկագրման (կրիպտոգրաֆիկ) միջոցներն իրենց կազմում պարունակում են Միասնական ցանկի 2.17 ցանկում ներառված՝ տեղեկությունը գաղտնի կերպով ստանալու համար նախատեսված հատուկ տեխնիկական միջոցներ, ապա ապրանքի կատեգորիան որոշում է համաձայնեցնող մարմինը:

5. Ծածկագրման (կրիպտոգրաֆիկ) միջոցների ներմուծումը և (կամ) արտահանումն իրականացվում է համապատասխան նոտիֆիկացիան նոտիֆիկացիաների միասնական ռեեստրում ներառելու վերաբերյալ տեղեկությունների (այսուհետ՝ նոտիֆիկացման վերաբերյալ տեղեկություններ) կամ Ապրանքների առանձին տեսակների արտահանման և (կամ) ներմուծման համար լիցենզիա ստանալու մասին հայտի ներկայացման ու Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կողմից 2014 թվականի նոյեմբերի 6-ի թիվ 199 որոշմամբ հաստատված՝ այդպիսի լիցենզիայի ձևակերպմանն առնչվող հրահանգին համապատասխան ձևակերպված լիցենզիայի (այսուհետ՝ լիցենզիա) կամ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի 2012 թվականի մայիսի 16-ի թիվ 45 որոշմամբ հաստատված ձևով կազմված եզրակացության (այսուհետ՝ եզրակացություն (թույլատրագիր)) առկայության դեպքում:

## II. Մաքսային ընթացակարգերով ձևակերպելը

6. Ծածկագրման (կրիպտոգրաֆիկ) միջոցները «ներքին սպառման համար բացթողում» և «արտահանում» մաքսային ընթացակարգերով ձևակերպելն իրականացվում է անդամ պետության մաքսային մարմին լիցենզիա կամ նոտիֆիկացիայի վերաբերյալ տեղեկություններ ներկայացնելու դեպքում:

Ծածկագրման (կրիպտոգրաֆիկ) միջոցները «ներքին սպառման համար բացթողում» և «արտահանում» մաքսային ընթացակարգերով ձևակերպելը՝ սեփական կարիքների բավարարման նպատակով, առանց դրանց տարածման ու ծածկագրման (կրիպտոգրաֆիկ) ոլորտում երրորդ անձանց ծառայություններ մատուցելու իրավունքի, իրականացվում է անդամ պետության մաքսային մարմին եզրակացություն (թույլատրագիր) կամ նոտիֆիկացիայի վերաբերյալ տեղեկություններ ներկայացնելու դեպքում:

Չի պահանջվում ներկայացնել լիցենզիա, եզրակացություն (թույլատրագիր) կամ նոտիֆիկացիայի վերաբերյալ տեղեկություններ բջջային կապի օպերատորների կողմից սիմ-քարտերի փորձանմուշները, միջազգային փոխանակման նպատակով՝ 20 հատից ոչ ավելի թվով «ներքին սպառման համար բացթողում» և «արտահանում» մաքսային ընթացակարգերով ձևակերպելու դեպքում:

7. Ծածկագրման (կրիպտոգրաֆիկ) միջոցները «վերամշակում» մաքսային տարածքում», «վերամշակում» մաքսային տարածքից դուրս», «վերամշակում» ներքին սպառման համար», «ժամանակավոր ներմուծում (ընդունում)», «ժամանակավոր արտահանում», «ազատ մաքսային գոտի» և «ազատ պահեստ» մաքսային ընթացակարգերով ձևակերպելն իրականացվում է անդամ պետության մաքսային մարմին եզրակացություն (թույլատրագիր) կամ նոտիֆիկացիայի վերաբերյալ տեղեկություններ ներկայացնելու դեպքում:

Ծածկագրման (կրիպտոգրաֆիկ) միջոցները համապատասխանաբար «ժամանակավոր ներմուծում (ընդունում)» կամ «ժամանակավոր արտահանում» մաքսային ընթացակարգերի գործողության եզրափակման դեպքում «վերարտահանում» կամ «վերաներմուծում» մաքսային ընթացակարգերով ձևակերպելն իրականացվում է այն եզրակացության (թույլատրագիր) առկայության դեպքում, որի հիման վրա այդ ապրանքները ձևակերպվել էին «ժամանակավոր ներմուծում (ընդունում)» կամ «ժամանակավոր արտահանում» մաքսային ընթացակարգերով, կամ նոտիֆիկացիայի վերաբերյալ տեղեկությունների առկայության դեպքում: Այլ դեպքերում ծածկագրման (կրիպտոգրաֆիկ) միջոցները «վերաներմուծում» կամ «վերարտահանում» մաքսային ընթացակարգերով ձևակերպելն իրականացվում է անդամ պետության մաքսային մարմին եզրակացություն (թույլատրագիր) կամ նոտիֆիկացիայի վերաբերյալ տեղեկություններ ներկայացնելու դեպքում:

8. Ծածկագրման (կրիպտոգրաֆիկ) միջոցները ժամանակավոր մաքսային մարմնից Միության մաքսային տարածք՝ մինչև ներքին մաքսային մարմին փոխադրման, ինչպես նաև ներքին մաքսային մարմնից մինչև Միության մաքսային տարածքից մեկնման վայրի

մաքսային մարմին փոխադրման նպատակով «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով, ինչպես նաև «մաքսային պահեստ» ու «հրաժարում՝ հոգուտ պետության» մաքսային ընթացակարգերով ձևակերպելու իրականացվում է այլ մաքսային ընթացակարգերով ձևակերպելու համար ներկայացված լիցենզիայի կամ եզրակացության (թույլատրագրի) կամ նոտիֆիկացիաների վերաբերյալ տեղեկությունների առկայության դեպքում:

Ծածկագրման (կրիպտոգրաֆիկ) միջոցները ժամանման վայրում մաքսային մարմնից Միության մաքսային տարածք՝ մինչև Միության մաքսային տարածքից մեկնման վայրի մաքսային մարմին փոխադրման նպատակով «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով, ինչպես նաև «ոչնչացում» մաքսային ընթացակարգերով ձևակերպելու իրականացվում է անդամ պետության մաքսային մարմին լիցենզիա, եզրակացություն (թույլատրագրի) կամ նոտիֆիկացիաների վերաբերյալ տեղեկություններ ներկայացնելու դեպքում:

9. Ծածկագրման (կրիպտոգրաֆիկ) միջոցները «անմաքս առևտուր» մաքսային ընթացակարգով ձևակերպելու իրականացվում է անդամ պետության մաքսային մարմին նոտիֆիկացիայի վերաբերյալ տեղեկություններ ներկայացնելու դեպքում:

### III Լիցենզիայի տրամադրումը

10. Իրավաբանական անձինք և որպես անհատ ձեռնարկատեր գրանցված ֆիզիկական անձինք (այսուհետ՝ հայտատուներ) լիցենզիայի ձևակերպման համար «Ապրանքների արտահանման և (կամ) ներմուծման լիցենզիաների ու թույլտվությունների տրամադրման կանոններին» («Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի 7-րդ հավելվածի հավելված) (այսուհետ՝ Կանոններ) 10-րդ կետի 1-5-րդ ենթակետերով նախատեսված փաստաթղթերն ու տեղեկությունները, ինչպես նաև Կանոնների 10-րդ կետի 6-րդ ենթակետին համապատասխան հետևյալ փաստաթղթերն ու տեղեկությունները ներկայացնում են այն անդամ պետության լիցենզիայի մարմին, որի տարածքում է գրանցված հայտատուն՝

ա) հայտատուի ծանուցումը կամ անդամ պետության օրենսդրությամբ նախատեսված՝ ներմուծվող ծածկագրման (կրիպտոգրաֆիկ) միջոցների կազմում Միասնական ցանկի 2.16 բաժնում ներառված ռադիոէլեկտրոնային միջոցների և (կամ) քաղաքացիական նշանակության բարձր հաճախականության սարքերի բացակայության վերաբերյալ այլ փաստաթուղթ:

բ) անդամ պետության օրենսդրությամբ նախատեսված այլ փաստաթղթեր:

11. Հայտատուի կողմից ներկայացվող փաստաթղթերի պատճենները պետք է վավերացված լինեն Կանոնների 11-րդ կետով սահմանված կարգով:

12. Լիցենզիա տրամադրելու մասին որոշումն ընդունվում է անդամ պետության լիցենզիայի մարմնի կողմից՝ համաձայնեցնող մարմնի հետ համաձայնեցմամբ՝ տվյալ անդամ պետության օրենսդրությամբ նախատեսված կարգով:

Հայտատուի կողմից համաձայնեցնող մարմին են ներկայացվում սույն Հիմնադրույթի 10-րդ կետում նշված փաստաթղթերը, եթե դա նախատեսված է անդամ պետության օրենսդրությամբ: Ընդ որում, սույն Հիմնադրույթի 10-րդ կետի «բ» ենթակետում նշված փաստաթղթերը չեն ներկայացվում անդամ պետության լիցենզիայի մարմնին:

Համաձայնեցումը կարող է իրականացվել եզրակացություն (թույլատրագրի) տրամադրելու միջոցով:

13. Լիցենզիայի տրամադրումը մերժվում է Կանոնների 14-րդ կետի 1-ից 4-րդ ենթակետերով նախատեսված հիմքերի առկայության դեպքում, ինչպես նաև Կանոնների 14-րդ կետի 6-րդ ենթակետին համապատասխան՝ համաձայնեցնող մարմնի՝ լիցենզիայի տրամադրման մասին հայտի համաձայնեցումը մերժելու դեպքում:

### IV Եզրակացության (թույլատրագրի) տրամադրումը

14. Ծածկագրման (կրիպտոգրաֆիկ) միջոցները սույն Հիմնադրույթի 6-րդ և 7-րդ կետերով նախատեսված մաքսային ընթացակարգերով ձևակերպելու նպատակով՝ եզրակացությունը (թույլատրագրի) տրամադրվում է համաձայնեցնող մարմնի հետևյալ փաստաթղթերը ներկայացնելու դեպքում՝

ա) այն Ապրանքների միասնական ցանկում ներառված առանձին ապրանքների ներմուծման, արտահանման և տարանցման վերաբերյալ եզրակացության (թույլատրագրի) միասնական ձևը լրացնելու վերաբերյալ մեթոդական ցուցումներին համապատասխան ձևակերպված եզրակացության (թույլատրագրի) նախագիծը, որոնք նկատմամբ Եվրասիական տնտեսական համայնքի շրջանակներում մաքսային միության անդամ պետությունների կողմից երրորդ երկրների հետ առևտրում կիրառվում են Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կողմից 2012 թվականի մայիսի 16-ի թիվ 45 որոշմամբ հաստատված ներմուծման կամ արտահանման արգելքներ կամ սահմանափակումներ:

բ) ծածկագրման (կրիպտոգրաֆիկ) միջոցին առնչվող տեխնիկական փաստաթղթերը (եյքային ծածկագրերը ներկայացնելու պարտադիր պահանջ չէ, հայտատուի հրաժարվելը եյքային ծածկագրեր ներկայացնելու վերաբերյալ հիմք չէ՝ եզրակացության (թույլատրագրի) տրամադրելը մերժելու համար):

գ) անդամ պետության օրենսդրությամբ նախատեսված այլ փաստաթղթեր:

15. Եզրակացության (թույլատրագրի) տրամադրումը մերժվում է հետևյալ հիմքերի առկայության դեպքում՝

ա) հայտատուի կողմից սույն Հիմնադրույթի 14-րդ կետով նախատեսված փաստաթղթերը չեն ներկայացնելու:

բ) եզրակացություն (թույլատրագրի) ստանալու համար ներկայացված փաստաթղթերում թերի կամ անարժանահավատ տեղեկությունների առկայությունը:

գ) անդամ պետությունների օրենսդրությամբ նախատեսված այլ հիմքեր:

ՀԱՎԵԼՎԱԾ ԹԻՎ 1  
«Ծածկագրման (կրիպտոգրաֆիկ) միջոցները  
Եվրասիական տնտեսական միության մաքսային  
տարածք ներմուծելու և Եվրասիական  
տնտեսական միության մաքսային տարածքից  
արտահանելու մասին» հիմնադրույթի

(ձև)

### ՄԻԱՍՆԱԿԱՆ ՌԵԵՍՏ

#### Ծածկագրման (կրիպտոգրաֆիկ) միջոցների և դրանք պարունակող ապրանքների բնութագրերի վերաբերյալ նոտիֆիկացիաների

Նոտիֆիկացիայի համարը	Ապրանքի անվանումը	Ապրանք արտադրողը	Նոտիֆիկացիայի հրապարակման ամսաթիվը	Գործողության ժամկետը	Նույնականացուցիչ	Կարգավիճակը*	Չեղյալ հայտարարելու ամսաթիվը
1	2	3	4	5	6	7	8

ՀԱՎԵԼՎԱԾ ԹԻՎ 2  
«Ծածկագրման (կրիպտոգրաֆիկ) միջոցները  
Եվրասիական տնտեսական միության մաքսային  
տարածք ներմուծելու և Եվրասիական  
տնտեսական միության մաքսային տարածքից  
արտահանելու  
մասին» հիմնադրույթի

### ՀԻՄՆԱԴՐՈՒՅՑ

#### Ծածկագրման (կրիպտոգրաֆիկ) միջոցների և դրանք պարունակող ապրանքների բնութագրերի վերաբերյալ նոտիֆիկացիայի մասին

1. Սույն Հիմնադրույթով սահմանվում են.

ա) ծածկագրման (կրիպտոգրաֆիկ) միջոցների և դրանք պարունակող ապրանքների տեխնիկական ու կրիպտոգրաֆիկ բնութագրերի վերաբերյալ նոտիֆիկացիան (այսուհետ՝ նոտիֆիկացիա) լրացնելու և ձևակերպելու կարգը:

բ) նոտիֆիկացիան Եվրասիական տնտեսական միության անդամ պետության պետական իշխանության՝ պետական (ազգային) անվտանգության ապահովման ոլորտի այն մարմին ներկայացնելու կարգը, որը, այդ պետության օրենսդրությունը համապատասխան, լիցենզիաներ համաձայնեցնելու, եզրակացություններ (թույլատրագրեր) տրամադրելու և ծանուցումներ գրանցելու համար (այսուհետ համապատասխանաբար՝ համաձայնեցնող մարմին, անդամ պետություն, Միություն):

գ) համաձայնեցնող մարմինների կողմից գրանցված ծանուցումների մասին տեղեկությունները ձևավորելու և Եվրասիական տնտեսական հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով) ներկայացնելու կարգը:

դ) «Ինտերնետ» տեղեկատվական-հեռահաղորդակցության ցանցում Միության պաշտոնական կայքում (այսուհետ համապատասխանաբար՝ Միության պաշտոնական կայք, Ինտերնետ ցանց) ծածկագրման (կրիպտոգրաֆիկ) միջոցների և դրանք պարունակող ապրանքների տեխնիկական ու կրիպտոգրաֆիկ բնութագրերի վերաբերյալ նոտիֆիկացիաների միասնական ռեեստրը (այսուհետ՝ նոտիֆիկացումների միասնական ռեեստր) հրապարակելու կարգը:

ե) Լոտիֆիկացիան չեղյալ հայտարարելու կարգը:

2. Լոտիֆիկացիան լրացվում է «Ծածկագրման (կրիպտոգրաֆիկ) միջոցները Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածք ներմուծելու և Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածքից արտահանելու մասին» հիմնադրույթի 3-րդ հավելվածով նախատեսված ձևով (Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի ապրիլի 21-ի թիվ 30 որոշման թիվ 9 հավելված):

Լոտիֆիկացիան լրացվում է ռուսերենով: Թույլատրվում է լատինատառ գրել տեխնոլոգիաների, արձանագրությունների, կրիպտոգրաֆիկ ալգորիթմների անվանումները և դրանց համընդհանուր ճանաչում ունեցող հապավումները, ապրանքը պատրաստողի վավերապայմանների անվանումները:

3. Լոտիֆիկացիան ձևակերպվում է ապրանքի արտադրողի կամ ապրանքի արտադրողի կողմից լիազորված անձի կողմից (այսուհետև՝ հայտատուներ)՝ արտադրողի սեփական ապացույցների հիման վրա՝ մեկ անգամ:

Հայտատուն լրացնում է Լոտիֆիկացիայի 1-9-րդ կետերը:

4. Լոտիֆիկացիայի մեջ կարող են ներկայացվել տեղեկություններ մեկ տեսակի ապրանքի կամ այնպիսի միատեսակ ապրանքների խմբի վերաբերյալ, որոնք իրենց կազմում պարունակում են Լույնական ծածկագրման (կրիպտոգրաֆիկ) միջոցներ (ֆունկցիոնալ ավարտուն ապրանքներ), որոնք իրականացնում են միևնույն կրիպտոգրաֆիկ ալգորիթմը, ունեն աշխատանքային կրիպտոգրաֆիկ բանալու միատեսակ առավելագույն թույլատրելի երկարություն, ֆունկցիոնալ հնարավորությունների միատեսակ հավաքածու, որոնք միևնույն կրիպտոգրաֆիկ բանալին և միևնույն մուտքային հերթականությունը մուտքագրելիս ապահովում են միևնույն ելքային հերթականությունը):

5. Լոտիֆիկացիայի 1-ին կետում նշվում է ապրանքի կամ իր կազմում Լույնական ծածկագրման միջոցներ ունեցող միատեսակ ապրանքների խմբի (կոնկրետ անվանումների թվարկմամբ) առևտրային, կոմերցիոն կամ ավանդական այլ անվանում, ինչպես նաև ապրանքային նշանների, մակնիշների, մոդելների, ապրանքատեսակների, ստանդարտների և այլ տեխնիկական ու առևտրային բնութագրերի վերաբերյալ տեղեկություններ:

Ծրագրային ապահովման համար նշվում է տարբերակը:

Թույլատրվում է նաև ապրանքի անվանման ավելացնել «և դրա պահեստամասերը»:

Միատեսակ ապրանքների խմբի ապրանքի յուրաքանչյուր անվանում նշվում է Նոր տողից: Ապրանքի անվանումից հետո թույլատրվում է Նոր տողից ավելացնել ծանոթագրություններ (բերված հասկացությունների համար):

6. Լոտիֆիկացիայի 2-րդ կետում նշվում են ապրանքի նկարագիրն ու նշանակումը, ինչպես նաև այդպիսի ապրանքի մեջ օգտագործվող ծածկագրման (կրիպտոգրաֆիկ) ֆունկցիաների նշանակումը:

7. Լոտիֆիկացիայի 3-րդ կետում նշվում են իրավաբանական անձի՝ ապրանքն արտադրողի անվանումն ու հասցեն, դրա գլխավորաստիճանի գրասենյակի գտնվելու վայրը, հեռախոսի և ֆաքսի համարները, ինչպես նաև էլեկտրոնային փոստի հասցեներն ու Ինտերնետ ցանցում պաշտոնական կայքը (առկայության դեպքում):

8. Լոտիֆիկացիայի 4-րդ կետում նշվում են հետևյալ տեղեկությունները՝ օգտագործվող ծածկագրման (կրիպտոգրաֆիկ) արձանագրությունների անվանումները, ապրանքի մեջ օգտագործվող կրիպտոգրաֆիկ ալգորիթմների (ֆունկցիաների) անվանումները, բոլոր օգտագործվող կրիպտոգրաֆիկ բանալիների առավելագույն երկարությունները:

Ծրագրային ապահովման անվանումն ու տարբերակը, առանց ուժեղացման և վերահարդրման անլար գործողության առավելագույն հեռավորությունը՝ պատրաստողի տեխնիկական պայմաններին համապատասխան (կրիպտոգրաֆիկ ալգորիթմը (ֆունկցիան) անլար ռադիոէլեկտրոնային սարքավորումներում օգտագործելու դեպքում):

պատրաստողի կողմից արգելափակված ծածկագրման (կրիպտոգրաֆիկ) ֆունկցիան (առկայության դեպքում): Ապրանքի մեջ օգտագործվող ծածկագրման (կրիպտոգրաֆիկ) արձանագրությունների և ալգորիթմների անվանումները նշվում են յուրաքանչյուր կոնկրետ ֆունկցիա կատարելու համար առանձին:

Կրիպտոգրաֆիկ ալգորիթմների (ֆունկցիաների) նկարագրության դեպքում աջ կողմում հատուկ նախատեսված վանդակում նշվում է «Ծածկագրման (կրիպտոգրաֆիկ) միջոցները Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածք ներմուծելու և Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածքից արտահանելու մասին» հիմնադրույթի 4-րդ հավելվածի համապատասխան կետի համարը (կատեգորիայի համարը) (Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի ապրիլի 21-ի թիվ 30 որոշման թիվ 9 հավելված):

9. Լոտիֆիկացիայի 5-րդ կետում նշվում են՝

ա) ապրանքի չհայտարարագրված ֆունկցիոնալ հնարավորությունները (առկայության դեպքում), որոնց օգտագործման դեպքում կարող է կատարվել՝

մշակվող տեղեկությունների գաղտնիության, հասանելիության կամ ամբողջականության խախտում.

առևտնետիֆիկացիայի գործընթացների խախտում.

միջամտություն էլեկտրոնային թվային ստորագրությունը (էլեկտրոնային ստորագրությունը) օգտագործելու մեխանիզմում.

բ) օպերատիվ-հետախուզական միջոցառումների անցկացման հնարավորության առկայությունը կամ բացակայությունը

(«ոստիկանական» ռեժիմ):

10. Լոտիֆիկացիայի 6-րդ կետում նշվում է Լոտիֆիկացիայի գործողության ավարտի ամսաթիվը. մինչև այդ ամսաթիվն արտադրողը երաշխավորում է ծածկագրման (կրիպտոգրաֆիկ) ֆունկցիաների անփոփոխ լինելը՝ օր/ամիս/տարի ձևաչափով:

11. Լոտիֆիկացիայի 7-րդ կետում նշվում են՝

իրավաբանական անձանց դեպքում անվանումը, դրա գլխամասային գրասենյակի գտնվելու վայրը, հեռախոսի ու ֆաքսի համարները, էլեկտրոնային փոստի հասցեները և Ինտերնետ ցանցում պաշտոնական կայքը (առկայության դեպքում), ինչպես նաև Լոտիֆիկացիան ձևակերպելու համար լիազորված անձի պաշտոնը, ազգանունը, անունը և հայրանունը.

ֆիզիկական անձանց դեպքում անձի ազգանունը, անունը և հայրանունը, անձը հաստատող փաստաթղթի տվյալները՝ անդամ պետության օրենսդրությանը համապատասխան:

Անդամ պետության հայտատուի կողմից նշվում են նաև դրա գրանցման վերաբերյալ տեղեկություններ (գրանցող մարմնի անվանումը, գրանցման ամսաթիվը, գրանցման համարը, Լույնականացման համարը)՝ անդամ պետության օրենսդրությանը համապատասխան:

12. Լոտիֆիկացիայի 8-րդ կետում նշվում են Լոտիֆիկացիան ձևակերպելու լիազորությունները հաստատող փաստաթղթի վավերապայմանները (ամսաթիվն ու համարը) (լիազորագիրը, պայմանագիրը և այլն) (լրացվում է, եթե Լոտիֆիկացիան ձևակերպվում է լիազորված անձի կողմից):

13. Լոտիֆիկացիայի 9-րդ կետում նշվում է Լոտիֆիկացիան լրացնելու ամսաթիվը՝ օր/ամիս/տարի ձևաչափով:

14. Լոտիֆիկացիան ստորագրվում է Լոտիֆիկացիան ձևակերպելու համար լիազորված անձի կողմից՝ ստորագրության վերծանմամբ, և հաստատվում է կնիքի դրոշմվածքով (առկայության դեպքում):

15. Հայտատուն պատասխանատվություն է կրում ներկայացված տեղեկությունների ու փաստաթղթերի արժանահավատության համար:

16. Եթե տեղեկություններն ամբողջությամբ չեն տեղավորվում Լոտիֆիկացիայի ձևաթղթի վրա, այդ տեղեկությունների մի մասը նշվում է ձևաթղթի դարձերեսին և յուրաքանչյուր լրացուցիչ թերթիկի վրա, ընդ որում, Լոտիֆիկացիայի յուրաքանչյուր թերթիկ ստորագրվում է հայտատուի կողմից և հաստատվում է կնիքի դրոշմվածքով (առկայության դեպքում):

17. Լոտիֆիկացիայի 1-8-րդ կետերը լրացնելու և այն էլեկտրոնային տեսքով կազմելու համար նախատեսված ծրագրային ապահովումը տեղադրվում է Միության պաշտոնական կայքում և պետք է հայտատուին թույլ տա՝

ա) լրացնել Լոտիֆիկացիայի ձևը՝ սույն Հիմնադրույթին համապատասխան.

բ) ձևակերպել Լոտիֆիկացիայի տպագիր ձևը և տպագրել այն.

գ) ձևակերպել Լոտիֆիկացիայի էլեկտրոնային պատճենը՝ 1-ին հավելվածի համաձայն տվյալների ֆայլի կառուցվածքին համապատասխան.

դ) պահել ֆայլում Լոտիֆիկացիայի ձևակերպված տպագիր ձևը և էլեկտրոնային պատճենը:

18. Լոտիֆիկացիան գրանցելու համար հայտատուն կից գրության հետ համաձայնեցնող մարմին է ներկայացնում հետևյալ փաստաթղթերը՝

ա) Լոտիֆիկացիայի 2 օրինակ՝ ձևակերպված սույն Հիմնադրույթին համապատասխան.

բ) Լոտիֆիկացիայի էլեկտրոնային պատճենը տեղեկատվության էլեկտրոնային կրիչի վրա (կոմպակտ սկավառակ, ֆլեշ հիշողություն)՝ սույն Հիմնադրույթի 1-ին հավելվածով նախատեսված տվյալների ֆայլի կառուցվածքին համապատասխան.

գ) անձի՝ Լոտիֆիկացիան ձևակերպելու լիազորությունները հաստատող փաստաթուղթ, որը հավաստվել (օրինականացվել) է արտադրողի պետության օրենսդրությամբ սահմանված կարգով: Եթե նշված փաստաթուղթը կազմված է օտար լեզվով, ապա տվյալ փաստաթղթի բնօրինակին (նուտարական հաստատմամբ պատճենին) կցվում է անդամ պետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված թարգմանությունն այն պետության լեզվով, որի համաձայնեցնող մարմինը գրանցում է Լոտիֆիկացիան:

19. Եթե Լոտիֆիկացիան ձևակերպվում է երրորդ երկրի արտադրող կազմակերպություն հանդիսացող հայտատուի կողմից, ապա այն պետք է օրինականացվի:

20. Լոտիֆիկացիան և փաստաթղթերը կարող են ներկայացվել էլեկտրոնային փաստաթղթի ձևով՝ անդամ պետության օրենսդրությամբ նախատեսված կարգով:

Թույլատրվում է փաստաթղթերը ներկայացնել նաև հայտատուի էլեկտրոնային թվային ստորագրությամբ (էլեկտրոնային

ստորագրությամբ) ստորագրված տեսածրված փաստաթղթերի ձևով, եթե դա նախատեսված է անդամ պետության օրենսդրությամբ:

21. Համաձայնեցնող մարմինը նոտիֆիկացիայի գրանցման վերաբերյալ փաստաթղթերը ներկայացնելու օրվանից ոչ ուշ, քան յոթ աշխատանքային օր հետո գրանցում է (հրաժարվում է գրանցել) նոտիֆիկացիան և Հանձնաժողով է ներկայացնում տեղեկություններ գրանցված նոտիֆիկացիաների վերաբերյալ՝ 2-րդ հավելվածի համաձայն տվյալների ֆայլի կառուցվածքին համապատասխան:

Համաձայնեցնող մարմինները պատասխանատվություն են կրում գրանցված ու չեղյալ հայտարարված նոտիֆիկացիաների վերաբերյալ տեղեկությունների ամբողջականության ու արժանահավատության համար:

22. Հանձնաժողովը գրանցված նոտիֆիկացիաների վերաբերյալ տեղեկություններն ստանալու օրվանից ոչ ուշ, քան երեք աշխատանքային օր հետո դրանք ավելացնում է Միության պաշտոնական կայքում հրապարակվող՝ նոտիֆիկացիաների միասնական ռեեստրում:

Նոտիֆիկացիան գործում է դրա գրանցման վերաբերյալ տեղեկությունները նոտիֆիկացիաների միասնական ռեեստրում ավելացնելու օրվանից:

23. Նոտիֆիկացիայի գրանցման (նոտիֆիկացիայի գրանցումը մերժելու) և համաձայնեցնող մարմնում գրանցված նոտիֆիկացիաների վերաբերյալ տեղեկությունները նոտիֆիկացիաների միասնական ռեեստրում ավելացնելու ժամկետը չպետք է գերազանցի տասն աշխատանքային օրը՝ նոտիֆիկացիայի գրանցման վերաբերյալ փաստաթղթերը համաձայնեցնող մարմին ներկայացնելու օրվանից:

24. Հանձնաժողովը պատասխանատվություն է կրում Միության պաշտոնական կայքում տեղադրած՝ գրանցված նոտիֆիկացիաների վերաբերյալ տվյալների ամբողջականության և հավաստիության համար:

25. Միության պաշտոնական կայքում օգտագործողներին հնարավորություն է տրվում ծանոթանալու և փնտրելու գրանցված նոտիֆիկացիաների վերաբերյալ տեղեկությունները:

26. Նոտիֆիկացիայի գրանցման վերաբերյալ փաստաթղթերը ներկայացնելու օրվանից մինչև նոտիֆիկացիայի գրանցումն ընկած ժամանակահատվածում հայտատուն կարող է նոտիֆիկացիայի մեջ փոփոխություններ կատարել նոտիֆիկացիան ձևակերպելու համար լիազորված անձի կողմից այդ փոփոխությունների մակագրությամբ, ընդ որում, նոտիֆիկացիայի գրանցման համար սահմանված ժամկետը վերսկսվում է նոտիֆիկացիայի մեջ փոփոխություններ կատարելու օրվանից:

27. Եթե նոտիֆիկացիայի գրանցման համար ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում սույն Հիմնադրույթի պահանջներին, ապա համաձայնեցնող մարմինը հրաժարվում է գրանցել նոտիֆիկացիան:

28. Համաձայնեցնող մարմինն իրավունք ունի ընդունելու որոշում հետևյալ դեպքերում նոտիֆիկացիան չեղյալ հայտարարելու վերաբերյալ՝

ա) հայտատուի կողմից համաձայնեցնող մարմին նոտիֆիկացիայի գործողության դադարեցման վերաբերյալ հայտ ներկայացնելը՝ պատճառի մատուցմանը:

բ) համաձայնեցնող մարմնի կողմից նոտիֆիկացիայի մեջ նշված ոչ արժանահավատ կամ ոչ ամբողջական տեղեկությունների հայտնաբերումը:

գ) նոտիֆիկացիայի մեջ նշված ծածկագրման (կրիպտոգրաֆիկ) ֆունկցիաներ հայտնաբերել կամ ծածկագրման (կրիպտոգրաֆիկ) ֆունկցիաների՝ նոտիֆիկացիայի մեջ նշվածներից տարբեր լինելը:

29. Նոտիֆիկացիան չեղյալ հայտարարելու դեպքում համաձայնեցնող մարմինը երեք աշխատանքային օրվա ընթացքում դրա մասին տեղեկացնում է Հանձնաժողովին:

30. Նոտիֆիկացիայի գործողությունը դադարեցվում է այն չեղյալ հայտարարելու վերաբերյալ տեղեկությունները նոտիֆիկացիաների միասնական ռեեստրում մուտքագրելու օրվանից կամ դրա գործողության ժամկետը լրանալու օրվանից:

ՀԱՎԵԼԱՍ ԹԻՎ 1  
«Ծանկագրման (կրիպտոգրաֆիկ) միջոցների և դրանց պարունակող ապրանքների քննազգրների վերաբերյալ նոտիֆիկացիայի մասին» հիմնադրույթի

**Նոտիֆիկացիաների վերաբերյալ տվյալների այն ֆայլի կառուցվածքը, որը ներկայացվում է Եվրասիական տնտեսական միության անդամ պետության համաձայնեցնող մարմին**

Նոտիֆիկացիաների վերաբերյալ տվյալների ֆայլը պետք է ներկայացվի Եվրասիական տնտեսական միության անդամ պետության համաձայնեցնող մարմին՝ \*.xls ձևաչափով: Նշված ֆայլի կառուցվածքի նկարագրությունը ներկայացված է աղյուսակում:

Կառուցվածքի տարրի անվանումը	Դաշտի տեսակը	Իմաստային բովանդակությունը	Պարտավորությունը
1. Համարը <sup>1</sup>	սիմվոլային	գրանցման համարը	ոչ
2. Ապրանքի անվանումը	սիմվոլային	ապրանքի անվանումը	այո
3. Ապրանք արտադրողը	սիմվոլային	ապրանք արտադրողը	այո
4. Նոտիֆիկացիայի գրանցման ամսաթիվը <sup>1</sup>	Ամսաթիվը՝ օր/ամիս/տարի ձևաչափով	Նոտիֆիկացիայի գրանցման ամսաթիվը	ոչ
5. Գործողության ժամկետը	Ամսաթիվը՝ օր/ամիս/տարի ձևաչափով	Նոտիֆիկացիայի գործողության ժամկետը	այո
6. Կարգավիճակը <sup>1</sup>	տրամաբանական	Նոտիֆիկացիայի կարգավիճակը նշանակություն ունի՝ գործում է/ չեղյալ է հայտարարված	ոչ
7. Նույնականացուցիչ <sup>2</sup>	սիմվոլային	ապրանքի նույնականացուցիչ (12-նիշանոց ծածկագիր)	այո

<sup>1</sup> Լրացվում է Եվրասիական տնտեսական միության անդամ պետության համաձայնեցնող մարմնի կողմից:

<sup>2</sup> Լրացվում է նոտիֆիկացիայի 4-րդ կետում ավելացված տեղեկությունների հիման վրա՝ «Ծանկագրման (կրիպտոգրաֆիկ) միջոցները Եվրասիական տնտեսական միության մասնաբաժնի տարածք ներմուծելու և Եվրասիական տնտեսական միության մասնաբաժնի արտահանելու մասին» հիմնադրույթի 3-րդ հավելվածով նախատեսված ձևով (Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կողմից 2015 թվականի ապրիլի 21-ի թիվ 30 որոշման թիվ 9 հավելված): Ցուցանիշի նշանակությունը ձևավորվում է 12 նիշից, որից յուրաքանչյուրը համապատասխանում է ծածկագրման (կրիպտոգրաֆիկ) միջոցների հանդիսացող կամ իրենց կազմում այնպիսի ծածկագրման (կրիպտոգրաֆիկ) միջոցներ պարունակող ապրանքների կատեգորիաների ցանկի հեթանոսական համարին, որոնց տեխնիկական ու կրիպտոգրաֆիկ քննազգրները ենթակա են «Ծանկագրման (կրիպտոգրաֆիկ) միջոցներ Եվրասիական տնտեսական միության մասնաբաժնի արտահանելու մասին» հիմնադրույթի 4-րդ հավելվածով (Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կողմից 2015 թվականի ապրիլի 21-ի թիվ 30 որոշման թիվ 9 հավելված) նախատեսված նոտիֆիկացիաները: Եթե նույնականացուցիչի սիմվոլը հերթական համարի նշանակությունը հավասար է նշված ցանկի կետի համարի նշանակությանը, ապա սիմվոլին տրվում է մեկի նշանակություն, հակառակ դեպքում՝ զրոյի:

ՀԱՎԵԼԱՍ ԹԻՎ 1  
«Ծանկագրման (կրիպտոգրաֆիկ) միջոցների և դրանց պարունակող ապրանքների քննազգրների վերաբերյալ նոտիֆիկացիայի մասին» հիմնադրույթի

**Գրանցված նոտիֆիկացիաների վերաբերյալ տվյալների այն ֆայլի կառուցվածքը, որը Եվրասիական տնտեսական միության անդամ պետության համաձայնեցնող մարմնի կողմից ներկայացվում է Եվրասիական տնտեսական հանձնաժողով**

Գրանցված նոտիֆիկացիաների վերաբերյալ տվյալների ֆայլը Եվրասիական տնտեսական միության անդամ պետության համաձայնեցնող մարմնի կողմից ներկայացվում է Եվրասիական տնտեսական հանձնաժողով՝ \*.xls ձևաչափով: Նշված ֆայլի կառուցվածքի նկարագրությունը ներկայացված է աղյուսակում:

Գրանցված նոտիֆիկացիաների վերաբերյալ տվյալների ֆայլը պարունակում է գրանցված և չեղյալ հայտարարված նոտիֆիկացիաների վերաբերյալ տեղեկություններ՝ տվյալները Եվրասիական տնտեսական հանձնաժողով վերջին անգամ ներկայացնելու օրվանից և պետք է ունենա հետևյալ անվանումը՝

որտեղ՝  
 n-ն այն տարրն է, որը ցույց է տալիս, որ տվյալ ֆայլը գրանցված նոտիֆիկացիաների վերաբերյալ տվյալների ֆայլ է.  
 XX-ը երկրի ծածկագիրն է՝ աշխարհի երկրների դասակարգչին համապատասխան (AM՝ Հայաստանի Հանրապետություն, BY՝  
 Բելառուսի Հանրապետություն, KZ՝ Ղազախստանի Հանրապետություն, RU՝ Ռուսաստանի Դաշնություն).  
 DD\_MM\_YYYY՝ ֆայլը եվրասիական տնտեսական հանձնաժողով ուղարկելու ամսաթիվը: Օրինակ՝ Ռուսաստանի Դաշնության  
 համաձայնեցնող մարմնի կողմից ուղարկվող՝ 2015 թվականի մարտի 15-ին գրանցված նոտիֆիկացիաների վերաբերյալ տվյալների  
 ֆայլը պետք է ունենա հետևյալ անվանումը

nRU\_15\_03\_2015.xls:

Կառուցվածքի տարրի անվանումը	Դաշտի տեսակը	Իմաստային բովանդակությունը	Պարտավորությունը
1. Համարը	սիմվոլային՝ XXXXXXXXXXXX ձևաչափով, որտեղ՝ XX -ը երկրի տառային ծածկագիրն է՝ աշխարհի երկրների դասակարգչին համապատասխան. NNNNNNNNN-ը՝ հերթական համարը	գրանցման համարը  Դաշտի նշանակությունը պետք է լինի ունիկալ	այո
2. Ապրանքի անվանումը	սիմվոլային	ապրանքի անվանումը	այո
3. Ապրանքի (արտադրանքի) գլխավոր պատրաստողը	սիմվոլային	ապրանք արտադրողը	այո
4. Նոտիֆիկացիայի գրանցման ամսաթիվը	Ամսաթիվը՝ օր/ամիս/տարի ձևաչափով	Նոտիֆիկացիայի գրանցման ամսաթիվը	այո
5. Գործողության ժամկետը	Ամսաթիվը՝ օր/ամիս/տարի ձևաչափով	Նոտիֆիկացիայի գործողության ժամկետը	այո
6. Նույնականացուցիչ	սիմվոլային	ապրանքի նույնականացուցիչ (12-նիշանոց ծածկագիր)	այո
7. Կարգավիճակը	տրամաբանական	Նոտիֆիկացիայի կարգավիճակը նշանակություն ունի՝  գործում է/ չեղյալ է հայտարարված	այո
8. Չեղյալ հայտարարելու ամսաթիվը	Ամսաթիվը՝ օր/ամիս/տարի ձևաչափով	Նոտիֆիկացիան չեղյալ հայտարարելու ամսաթիվը	այո (չեղյալ հայտարարելու դեպքում)

ՀԱՎԵԼՎԱԾ ԹԻՎ 3  
 «Ծածկագրման (կրիպտոգրաֆիկ) միջոցները եվրասիական տնտեսական միության մաքսային տարածք ներմուծելու և եվրասիական տնտեսական միության մաքսային տարածքից արտահանելու մասին» հիմնադրույթի

**ՆՈՏԻՖԻԿԱՑԻԱՅԻ ԶԵՎ**

**Ծածկագրման (կրիպտոգրաֆիկ) միջոցների և դրանք պարունակող ապրանքների բնութագրերի վերաբերյալ նոտիֆիկացիաների**

Գրանցված է ռեեստրում «\_\_» \_\_\_\_\_ 20\_\_ թ. թիվ \_\_\_\_\_ Համարը

Կ. Տ. (կնիքի տեղը) \_\_\_\_\_

(համաձայնեցնող մարմնի պաշտոնատար անձի ստորագրությունը) (Ա.Ա.Հ.)

**ՆՈՏԻՖԻԿԱՑԻԱ**

բնութագրերի (ծածկագրման (կրիպտոգրաֆիկ) միջոցների և (կամ) դրանք պարունակող ապրանքների. նշել անհրաժեշտը) վերաբերյալ \_\_\_\_\_

1. Ապրանքի անվանումը \_\_\_\_\_
2. Ապրանքի նշանակումը \_\_\_\_\_
3. Տեղեկություններ ապրանքներն արտադրողի վերաբերյալ \_\_\_\_\_ 4.

Օգտագործվող կրիպտոգրաֆիկ ալգորիթմները (ֆունկցիաները) և դրանք նշանակումը Կատեգորիայի թիվը՝ 4-րդ հավելվածից ա) \_\_\_\_\_

բ) \_\_\_\_\_

գ) \_\_\_\_\_

5. Օգտագործողին ներկայացվող շահագործման փաստաթղթերում չնկարագրված՝ ապրանքի ֆունկցիոնալ հնարավորությունները \_\_\_\_\_

6. Նոտիֆիկացիայի գործողության ժամկետը \_\_\_\_/\_\_\_\_/\_\_\_\_

7. Տեղեկություններ հայտատուի վերաբերյալ \_\_\_\_\_ 8.

Տեղեկություններ արտադրողի՝ Նոտիֆիկացիան ձևակերպելու համար անձի լիազորությունները հաստատող փաստաթղթի վերաբերյալ (անհրաժեշտության դեպքում) \_\_\_\_\_

9. Նոտիֆիկացիայի լրացման ամսաթիվը \_\_\_\_/\_\_\_\_/\_\_\_\_\_  
Հաստատում եմ Նոտիֆիկացիայի մեջ ներառված տեղեկությունների արժանահավատությունն ու ամբողջականությունը

4. Տ. (կնիքի տեղը) \_\_\_\_\_  
(հայտատուի ստորագրությունը) (Ս.Ա.Հ.)

Зарегистрирована в реестре « \_\_\_\_\_ » \_\_\_\_\_ 20 \_\_\_\_ г. № \_\_\_\_\_

М. П. \_\_\_\_\_ (подпись должностного лица согласующего органа) \_\_\_\_\_ (Ф. И. О.) \_\_\_\_\_

**НОТИФИКАЦИЯ**

о характеристиках \_\_\_\_\_ (цифровых (криптографических) средств и (или) товаров, их содержащих, – указать нужно)

1. Наименование товара \_\_\_\_\_

2. Назначение товара \_\_\_\_\_

3. Сведения об изготовителе товара \_\_\_\_\_

4. Используемые криптографические алгоритмы (функции) и их назначение: \_\_\_\_\_ № категории из приложения № 4

а) \_\_\_\_\_

б) \_\_\_\_\_

в) \_\_\_\_\_

5. Наличие в товаре функциональных возможностей, не описанных в предоставляемой пользователю эксплуатационной документации. \_\_\_\_\_

6. Срок действия нотификации \_\_\_\_\_ / \_\_\_\_ / \_\_\_\_

7. Сведения о заявителе \_\_\_\_\_

8. Сведения о документе изготовителя, удостоверяющего полномочия лица на оформление нотификации (при необходимости) \_\_\_\_\_

9. Дата заполнения нотификации \_\_\_\_\_ / \_\_\_\_ / \_\_\_\_

Достоверность и полноту сведений, включенных в нотификацию, подтверждаю:

М. П. \_\_\_\_\_ (подпись заявителя) \_\_\_\_\_ (Ф. И. О.) \_\_\_\_\_

**ՀԱՎԵԼՎԱԾ ԹԻՎ 4**  
«Ծածկագրման (կրիպտոգրաֆիկ) միջոցները Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածք ներմուծելու և եվրասիական տնտեսական միության մաքսային տարածքից արտահանելու մասին» հիմնադրույթի

#### ՑԱՆԿ

**Ծածկագրման (կրիպտոգրաֆիկ) միջոցներ հանդիսացող կամ իրենց կազմում ծածկագրման (կրիպտոգրաֆիկ) միջոցներ պարունակող այն ապրանքների կատեգորիաների, որոնց տեխնիկական կամ կրիպտոգրաֆիկ բնութագրերը ենթակա են Նոտիֆիկացիայի**

1. Իրենց կազմում ծածկագրման (կրիպտոգրաֆիկ) միջոցներ պարունակող ապրանքներ, որոնք ունեն հետևյալ բաղկացուցիչներից որևէ մեկը՝

1) սիմետրիկ կրիպտոգրաֆիկ ալգորիթ, որն օգտագործում է 56 բիտը չգերազանցող երկարություն ունեցող կրիպտոգրաֆիկ բանալի.

2) ասիմետրիկ կրիպտոգրաֆիկ ալգորիթ՝ հիմնված հետևյալ մեթոդներից ցանկացածի վրա՝

512 բիտը չգերազանցող չափով ամբողջական թվերի վերլուծություն արտադրիչների.

512 բիտը չգերազանցող չափով վերջնական դաշտի բազմապատկական խմբում դիսկրետ լոգարիթմների հաշվարկում.

սույն ենթակետի երրորդ պարբերության մեջ նշված դաշտից բացի այլ վերջնական դաշտի խմբում 112 բիտը չգերազանցող չափով դիսկրետ լոգարիթմ:

Ծանոթագրություններ. 1. Չույզության բիտերը չեն ընդգրկվում բանալու երկարության մեջ:

2. «Կրիպտոգրաֆիա» եզրույթը չի վերաբերում տվյալների սեղմման կամ կոդավորման ֆիքսված մեթոդներին:

2. Ծածկագրման (կրիպտոգրաֆիկ) միջոցներ պարունակող ապրանքներ, որոնք ունեն հետևյալ սահմանափակ ֆունկցիաները՝

1) աուտենտիֆիկացիա, որը ներառում է հասանելիության նկատմամբ հսկողության բոլոր ասպեկտները, որտեղ չկա ֆայլերի կամ տեքստերի ծածկագրություն՝ բացի այն ծածկագրությունից, որն անմիջականորեն կապված է գաղտնաբաժանի, անհատական նույնականացնող համարների կամ նման տվյալների պաշտպանության հետ՝ չթույլատրված հասանելիությունից պաշտպանելու համար.

2) էլեկտրոնային թվային ստորագրություն (էլեկտրոնային ստորագրություն):

Ծանոթագրություն: Աուտենտիֆիկացիայի և էլեկտրոնային թվային ստորագրության (էլեկտրոնային ստորագրության) ֆունկցիաները ներառում են դրանց հետ կապված բանալիների բաշխման ֆունկցիան:

3. Ծրագրային օպերացիոն համակարգերի բաղկացուցիչներ հանդիսացող ծածկագրման (կրիպտոգրաֆիկ) միջոցներ, որոնք կրիպտոգրաֆիկ հնարավորությունները չեն կարող փոփոխվել օգտագործողների կողմից, որոնք մշակվել են օգտագործողի կողմից ինքնուրույն տեղադրման համար առանց մատակարարի հետագա էական աջակցության և որոնք տեխնիկական փաստաթղթերը (կրիպտոգրաֆիկ փոխակերպումների ալգորիթմների նկարագրություն, փոխգործակցության արձանագրություններ, ինտերֆեյսի նկարագրություն և այլն) հասանելի են օգտագործողին:

4. Անհատական սմարթ-քարտեր (ինտելեկտուալ քարտեր),

1) որոնք կրիպտոգրաֆիկ հնարավորությունները սահմանափակ են սույն ցանկի 5-8-րդ կետերում նշված ապրանքների (արտադրանքի) կատեգորիաներում դրանց օգտագործմամբ.

2) լայն հանրային օգտագործման համար, որոնք կրիպտոգրաֆիկ հնարավորություններն օգտագործողի համար անհասանելի են, և որոնք հատուկ մշակման արդյունքում իրենց վրա պահպանվող անհատական տեղեկությունների համար ունեն պաշտպանության սահմանափակ հնարավորություններ:

Ծանոթագրություն. Եթե անձնական սիմ-քարտը (ինտելեկտուալ քարտը) կարող է իրականացնել մի քանի ֆունկցիա, ապա յուրաքանչյուր ֆունկցիայի հսկողական կարգավիճակը սահմանվում է առանձին:

5. Ընդունիչ ապարատուրա՝ ռադիոհեռարձակման, կոմերցիոն հեռուստատեսության համար կամ սահմանափակ լսարանին առանց թվային ազդանշանի ծածկագրման՝ հեռարձակման համար նախատեսված նույնօրինակ կոմերցիոն ապարատուրա՝ բացի բացառապես վիդեո կամ աուդիոալիքները կառավարելու, հեռարձակման մատակարարների հաշիվներն ուղարկելու կամ հաղորդումների հետ կապված տեղեկությունները հետ ուղարկելու համար ծածկագրությունն օգտագործելու դեպքերից:

6. Սարքավորումներ, որոնք կրիպտոգրաֆիկ հնարավորություններն օգտագործողի համար հասանելի չեն, որոնք հատուկ մշակված են, և որոնք կիրառումը սահմանափակված է հետևյալ ցանկացած միջոցով՝

1) ծրագրային ապահովումը մշակված է պատճենումից պաշտպանված ձևով.

2) հետևյալից ցանկացածի հասանելիությամբ՝ միայն ընթերցման համար հասանելի՝ տեղեկությունների էլեկտրոնային կրիչի վրա պահպանվող՝ պատճենումից պաշտպանվող բովանդակություն.

ծածկագրված ձևով կրիչների վրա պահվող տեղեկություններ, երբ տեղեկությունների այդ էլեկտրոնային կրիչները նույնական հավաքածուներով առաջարկվում են բնակչությանը վաճառվելու համար.

3) հեղինակային իրավունքներով պաշտպանված աուդիո և վիդեոտեղեկատվության պատճենման հսկողություն:

7) Ցածկագրման (կրիչատգրաֆիկ) սարքավորումներ, որոնք հատուկ մշակված են բանկային կամ ֆինանսական գործառնությունների համար, և որոնց կիրառումը սահմանափակված է այդ գործառնություններով:

Շանթագրություն. Ֆինանսական գործառնությունները ներառում են նաև տրանսպորտային ծառայությունների և վարկավորման համար հավաքագրումները և վճարումները:

8. Քաղաքացիական նշանակության դյուրակիր կամ շարժական ռադիոէլեկտրոնային միջոցներ (օրինակ՝ բջջային կապի քաղաքացիական առևտրային համակարգերում օգտագործելու համար), որոնք ունակ չեն միջանցիկ (բաժանորդից մինչև բաժանորդ) ծածկագրման:

9. Անլար ռադիոէլեկտրոնային սարքավորումներ, որոնք իրականացնում են տեղեկությունների ծածկագրում միայն անլար գործողության առավելագույն հեռավորությամբ ռադիոալիցքում առանց ուժեղացման և 400 մ-ից պակաս վերահաղորդման՝ արտադրողի տեխնիկական պայմանների համապատասխան:

10. Ծածկագրման (կրիչատգրաֆիկ) միջոցներ, որոնք օգտագործվում են տեղեկատվական հեռահաղորդակցման համակարգերի տեխնոլոգիական ալիքների և կապի ցանցերի պաշտպանության համար:

11. Ապրանքներ, որոնք կրիչատգրաֆիկ ֆունկցիան արգելափակված է արտադրողի կողմից:

12. Այլ ապրանքներ, որոնք պարունակում են սույն ցանկի 1-11-րդ կետերում նշվածներից բացի այլ ծածկագրման (կրիչատգրաֆիկ) միջոցներ, և համապատասխանում են հետևյալ կատեգորիաներին՝

1) Եվրասիական տնտեսական միության անդամ պետության օրենսդրությանը համապատասխան՝ հանրամատչելի են բնակչությանը առկա տեսակետից առանց սահմանափակումների վաճառքի համար մանրածախ առևտրի վայրերում հետևյալից յուրաքանչյուրի միջոցով՝ կանխիկ վաճառք. վաճառք՝ փոստով ապրանքներ պատվիրելու միջոցով. էլեկտրոնային գործարքներ. վաճառք՝ հեռախոսով պատվերների միջոցով.

2) ծածկագրման (կրիչատգրաֆիկ) ֆունկցիոնալ հնարավորությունները չեն կարող փոփոխվել օգտագործողի կողմից հեշտ եղանակով.

3) մշակված են օգտագործողի կողմից տեղադրման համար՝ առանց մատուցողի հետագա էական օգնության.

4) տեխնիկական փաստաթղթեր, որոնք հաստատում են, որ ապրանքները համապատասխանում են սույն կետի 1- 3-րդ ենթակետերի պահանջներին, արտադրողի կողմից հեշտ հասանելի են և անհրաժեշտության դեպքում արտադրողի (կրիչատգրման լիազորված անձի) կողմից ներկայացվում են համաձայնեցնող մարմին՝ վերջինիս պահանջով:

ՀԱՎԵԼՎԱԾ ԹԻՎ 10  
Եվրասիական տնտեսական  
հանձնաժողովի կողմից  
2015 թվականի ապրիլի 21-ի  
թիվ 30 որոշման

## ՀԻՄՆԱԴՐՈՒՅՑ

### Թմրամիջոցները, հոգեմեդիկամենտները (հոգեմետ) նյութերը և դրանց պրեկուրսորները Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածք ներմուծելու և Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածքից արտահանելու մասին

#### I. Ընդհանուր դրույթներ

1. Սույն Հիմնադրույթով սահմանվում է այն Ապրանքների միասնական ցանկի 2.12 բաժնում ներառված թմրամիջոցները, հոգեմեդիկամենտները (հոգեմետ) նյութերը և դրանց պրեկուրսորները Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածք ներմուծելու (այսուհետ՝ ներմուծում) և Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածքից արտահանելու (այսուհետ՝ արտահանում) համապատասխանաբար՝ արտահանում) կարգը, որոնք նկատմամբ երրորդ երկրների հետ առևտրի ժամանակ կիրառվում են «Երրորդ երկրների առևտրային ոչ սակագնային կարգավորման միջոցների մասին» արձանագրությանը սահմանափակված ոչ սակագնային կարգավորման միջոցները («Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի թիվ 7 հավելված) (այսուհետ՝ թմրամիջոցներ, հոգեմեդիկամենտներ (հոգեմետ) նյութեր և դրանց պրեկուրսորներ):

2. Սույն Հիմնադրույթում գործածվող հասկացությունները կիրառվում են «Երրորդ երկրների առևտրային ոչ սակագնային կարգավորման միջոցների մասին» արձանագրությանը («Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի 7-րդ հավելված) և Միության իրավունքի մաս կազմող միջազգային պայմանագրերով սահմանված իմաստներով:

3. Թմրամիջոցների, հոգեմեդիկամենտների (հոգեմետ) նյութերի և դրանց պրեկուրսորների ներմուծումը և (կամ) արտահանումը իրականացվում են Ապրանքների առանձին տեսակների արտահանման և (կամ) ներմուծման համար լիցենզիա ստանալու մասին հայտի ձևակերպման և Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կողմից 2014 թվականի նոյեմբերի 6-ի թիվ 199 որոշմամբ հաստատված այդպիսի լիցենզիայի ձևակերպման առևտրի հրահանգին համապատասխան ձևակերպված լիցենզիայի (այսուհետ՝ լիցենզիա) առկայության դեպքում՝ բացառությամբ թմրամիջոցների, հոգեմեդիկամենտների (հոգեմետ) նյութերի և դրանց պրեկուրսորների ներմուծման և (կամ) արտահանման՝ սույն Հիմնադրույթի 6-րդ կետի համապատասխան:

4. Լիցենզիան ներկայացվում է Միության անդամ պետության (այսուհետ՝ անդամ պետություն) մաքսային մարմին պրեկուրսորների մասին սահման թմրամիջոցների, հոգեմեդիկամենտների (հոգեմետ) նյութերի և դրանց պրեկուրսորների ժամանակ ժամանակ:

#### II. Մաքսային ընթացակարգերով ձևակերպելը

5. Թմրամիջոցները, հոգեմեդիկամենտները (հոգեմետ) նյութերը և դրանց պրեկուրսորները «ներքին սպառման համար բացառությամբ» և «արտահանում» մաքսային ընթացակարգերով ձևակերպելու իրականացվում է անդամ պետության մաքսային մարմին լիցենզիա ներկայացնելու դեպքում:

6. Չի պահանջվում լիցենզիա ներկայացնել անդամ պետության մաքսային մարմին հետևյալ դեպքերում՝

ա) ֆիզիկական անձանց կողմից սահմանափակ քանակությամբ թմրամիջոցների, հոգեմեդիկամենտների (հոգեմետ) նյութերի և դրանց պրեկուրսորների՝ որպես բժշկական նշանակության անձնական օգտագործման դեղորայքային միջոցների ներմուծում և (կամ) արտահանում (ներքին տարանցում) հաստատող այնպիսի բժշկական փաստաթղթերի առկայության դեպքում, որոնցում պետք է նշված լինեն այդ ապրանքի, ինչպես նաև պրեկուրսորների անվանումն ու քանակը՝ որպես անձնական օգտագործման համար նախատեսված ապրանքներ՝ Կողմերի օրենսդրությամբ սահմանված ծավալներով:

Հաստատող բժշկական փաստաթղթերը (դրանց հաստատված պատճենները) կազմվում են այն անդամ պետության լեզվով, որի տարածք ներմուծվում են նշված դեղամիջոցները, կամ կցվում է դրանց՝ նոտարական հաստատմամբ թարգմանությունը՝ նշված անդամ պետության լեզվով. եթե այլ բան նախատեսված չէ անդամ պետության օրենսդրությամբ.

բ) արտակարգ իրավիճակների դեպքում անհետաձգելի օգնություն ցուցաբերելու համար նախատեսված թմրամիջոցների, հոգեմեդիկամենտների (հոգեմետ) նյութերի և դրանց պրեկուրսորների ներմուծում և (կամ) արտահանում՝ անդամ պետության օրենսդրությանը համապատասխան.

գ) տրանսպորտային միջոցի առաջին օգնության արկղիկներում հետևյալ միջոցների առկայությունը՝ այդպիսի տրանսպորտային միջոցների գրանցման պետության օրենսդրությամբ սահմանված կարգով՝

թմրամիջոցներ, հոգեմեդիկամենտներ (հոգեմետ) նյութեր և դրանց պրեկուրսորներ՝ միջազգային երթևեկության մեջ գտնվող ծովային (գետային) նավերով ու օդանավերով.

հոգեմեդիկամենտներ (հոգեմետ) նյութեր և պրեկուրսորներ՝ միջազգային երթևեկության մեջ գտնվող երկաթուղային ու ավտոմոբիլային տրանսպորտով.

դ) որպես պաշտպան օգտագործվող պրեկուրսորների ներմուծում և (կամ) արտահանում այն քանակով, որն անհրաժեշտ է օդային, ծովով (գետով) նավարկող, երկաթուղային տրանսպորտային միջոցների սարքավորումների և տեխնիկական սարքերի նորմալ շահագործման պահանջները համար:

7. Թմրամիջոցները, հոգեմեդիկամենտները (հոգեմետ) նյութերը և դրանց պրեկուրսորները Միության մաքսային տարածքի ժամանակ վայրում մաքսային մարմնից մինչև Միության մաքսային տարածքից մեկնման վայրի մաքսային մարմին փոխադրելու նպատակով «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով ձևակերպելու իրականացվում է ժամանակ վայրում մաքսային մարմին՝

արտահանող պետության իրավասու մարմնի՝ թմրամիջոցների, հոգեներգործուն (հոգեմետ) նյութերի և դրանց պրեկուրսորների արտահանման թույլտվության հաստատված պատճենը կամ այդ մարմնի պաշտոնական ծանուցումն այն մասին, որ նշված թույլտվությունը չի պահանջվում, ներկայացնելու դեպքում:

Արտահանող պետության իրավասու մարմնի թույլտվության պատճենը պետք է հաստատվի (օրինականացվի) արտահանող պետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

8. Թմրամիջոցները, հոգեներգործուն (հոգեմետ) նյութերը և դրանց պրեկուրսորները ժամանման վայրում մաքսային մարմնից Միության մաքսային տարածք՝ մինչև Միության մաքսային տարածքից մեկնման վայրի մաքսային մարմին, ինչպես նաև ներքին մաքսային մարմնից մինչև Միության մաքսային սահմանից մեկնման վայրում մաքսային մարմին փոխադրման նպատակով «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով ձևակերպելն իրականացվում է ուսյն Հիմնարկային 5-րդ կետում նշված լիցենզիան մաքսային մարմնի ներկայացնելու դեպքում:

9. Չի թույլատրվում թմրամիջոցները, հոգեներգործուն (հոգեմետ) նյութերը և դրանց պրեկուրսորները ձևակերպել «մաքսային պահեստ», «վերամշակում մաքսային տարածքում», «վերամշակում մաքսային տարածքից դուրս», «վերամշակում ներքին սպառման համար», «ժամանակավոր ներմուծում (ընդունում)», «ժամանակավոր արտահանում», «անմաքս առևտուր, «ոչնչացում», «իրաժարում» հոգուտ պետության», «ազատ մաքսային գոտի», «ազատ պահեստ», «վերաներմուծում» և «վերաարտահանում» մաքսային ընթացակարգերով:

### III. Լիցենզիայի տրամադրումը

10. Իրավաբանական անձինք (այսուհետ՝ հայտատուներ) լիցենզիայի ձևակերպման համար «Ապրանքների արտահանման և (կամ) ներմուծման լիցենզիաների ու թույլտվությունների տրամադրման կանոններ» («Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի 7-րդ հավելվածի հավելված) (այսուհետ՝ կանոններ) 10-րդ կետի 1-5-րդ ենթակետերով նախատեսված փաստաթղթերն ու տեղեկությունները ներկայացնում են այն անդամ պետության լիազորված մարմին, որի տարածքում է գրանցված հայտատու:

Կանոնների 10-րդ կետի 6-րդ ենթակետին համապատասխան՝ թմրամիջոցների, հոգեներգործուն (հոգեմետ) նյութերի և դրանց պրեկուրսորների արտահանման համար լիցենզիա ձևակերպելու համար հայտատուները ներկայացնում են թմրամիջոցների, հոգեներգործուն (հոգեմետ) նյութերի և դրանց պրեկուրսորների կոնկրետ խմբաքանակի ներմուծման՝ ներմուծող պետության իրավասու մարմնի կողմից տրված թույլտվությունը (ընթացակարգ կամ դրա՝ նոտարական հաստատմամբ պատճենը) կամ այդ մարմնի կողմից պաշտոնական ծանուցում այն մասին, որ նշված թույլտվությունը չի պահանջվում:

11. Հայտատուի կողմից ներկայացվող փաստաթղթերի պատճենները պետք է վավերացված լինեն Կանոնների 11-րդ կետով սահմանված կարգով:

12. Եթե անդամ պետության օրենսդրության համապատասխան լիցենզիա տրամադրելու մասին որոշումը լիազոր մարմնի կողմից ընդունվում է տվյալ անդամ պետության պետական իշխանության այլ մարմնի (այսուհետ՝ համաձայնեցնող մարմին) հետ համաձայնեցմամբ, ապա այդ համաձայնեցումն իրականացվում է տվյալ անդամ պետության օրենսդրությամբ նախատեսված կարգով:

Համաձայնեցումը կարող է իրականացվել եզրակացություն (թույլատրագիր) տրամադրելու միջոցով:

13. «Թմրամիջոցների մասին» 1961 թվականի միասնական կոնվենցիային համապատասխան միջազգային հսկողության տակ գտնվող թմրամիջոցների արտահանման լիցենզիայի մեջ նշված քանակը չպետք է գերազանցի Թմրամիջոցների նկատմամբ հսկողության միջազգային կոմիտեի կողմից հաստատված ու հրապարակված՝ ներմուծման երկրի համար թմրամիջոցների կարիքների տարեկան հաշվարկները:

«Հոգեներգործուն (հոգեմետ) նյութերի մասին» 1961 թվականի կոնվենցիային համապատասխան միջազգային հսկողության տակ գտնվող թմրամիջոցների արտահանման լիցենզիայի մեջ նշված քանակը չպետք է գերազանցի Թմրամիջոցների նկատմամբ հսկողության միջազգային կոմիտեի կողմից հրապարակված՝ ներմուծման երկրի համար՝ նշված Կոնվենցիայի II-IV ցուցակներում ներառված նյութերի ամենամյա բժշկական ու գիտական կարիքների գնահատականները:

14. Լիցենզիայի տրամադրումը մերժվում է Կանոնների 14-րդ կետի 1-5-րդ ենթակետերով նախատեսված հիմքերի առկայության դեպքում, ինչպես նաև Կանոնների 14-րդ կետի 6-րդ ենթակետին համապատասխան՝ համաձայնեցնող մարմնի՝ լիցենզիայի տրամադրման մասին հայտի համաձայնեցումը մերժելու դեպքում:

15. Լիցենզիա ստացած հայտատուները անդամ պետության իրավասու մարմնի հաշվետվություն են ներկայացնում լիցենզիայի կատարման վերաբերյալ՝ Կանոնների 22-րդ կետին համապատասխան:

ՀԱՎԵԼԱՄԾ ԹԻՎ 11  
Եվրասիական տնտեսական  
հանձնաժողովի կողմից  
2015 թվականի ապրիլի 21-ի  
թիվ 30 որոշման

### ՑՆԱԿ

#### Մաքսային միության հանձնաժողովի և Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կողմից ուժը կորցրած ճանաչված որոշումների

1. «Բելառուսի Հանրապետության, Ղազախստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության մաքսային միության միասնական ոչ սակագնային կարգավորման մասին» Մաքսային միության հանձնաժողովի 2010 թվականի հունվարի 27-ի թիվ 168 որոշման 4-րդ կետը:

2. «Ոչ սակագնային կարգավորման բնագավառում նորմատիվ իրավական ակտերի մասին» Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կողմից 2012 թվականի օգոստոսի 16-ի թիվ 134 որոշման մեջ՝

ա) այն Ապրանքների միասնական ցանկի 1.2, 1.3, 1.7, 1.8, 2.3, 2.6 - 2.8, 2.11, 2.12, 2.19 - 2.21 բաժիններ, որոնց նկատմամբ Եվրասիական տնտեսական համայնքի շրջանակներում Մաքսային միության անդամ պետությունների կողմից երրորդ երկրների հետ՝ նշված Որոշմամբ հաստատված առևտրում կիրառվում են ներմուծման կամ արտահանման սահմանափակումներ կամ արգելքներ:

բ) նշված Որոշմամբ հաստատված սահմանափակումների կիրառման մասին դրույթների մեջ՝

«Վտանգավոր թափոնները Մաքսային միության մաքսային տարածքը ներմուծելու, Մաքսային միության մաքսային տարածքից արտահանելու և Մաքսային միության մաքսային տարածքով տարանցելու կարգի մասին» հիմնադրույթ

«Մաքսային միության մաքսային տարածքից կենդանի վայրի կենդանիների, առանձին վայրի բույսերի ու վայրի դեղահումքի արտահանման կարգի մասին» հիմնադրույթ:

«Մաքսային միության մաքսային տարածքից վայրի կենդանիների ու բույսերի, դրանց մասերի և (կամ) ածանցյալների (դերիվատների)՝ Բելառուսի Հանրապետության, Ղազախստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության կարմիր գրքերում ներառված հազվագյուտ ու անհետացման եզրին գտնվող տեսակների արտահանման կարգի մասին» հիմնադրույթ:

«Մաքսային միության մաքսային տարածքից հանքային հումքի արտահանման կարգի մասին» հիմնադրույթ:

«Թմրամիջոցները, հոգեներգործուն նյութերը և դրանց պրեկուրսորները Մաքսային միության մաքսային տարածքը ներմուծելու, մաքսային տարածքից արտահանելու և Մաքսային միության մաքսային տարածքով տարանցելու կարգի մասին» հիմնադրույթ:

«Ծածկագրման (կրիպտոգրաֆիկ) միջոցները Մաքսային միության մաքսային տարածքը ներմուծելու և Մաքսային միության մաքսային տարածքից արտահանելու կարգի մասին» հիմնադրույթ:

«Մշակութային արժեքները, ազգային արխիվային ֆոնդերի փաստաթղթերը և արխիվային փաստաթղթերի բնօրինակները Մաքսային միության մաքսային տարածքը ներմուծելու և Մաքսային միության մաքսային տարածքից արտահանելու կարգի մասին» հիմնադրույթ:

«Մարդու օրգաններ և (կամ) հյուսվածքներ, արյուն ու դրա բաղադրամասեր Մաքսային միության մաքսային տարածքը ներմուծելու և Մաքսային միության մաքսային տարածքից արտահանելու կարգի մասին» հիմնադրույթ:

3. «Սահմանափակումների կիրառման մասին» հիմնադրույթի մեջ փոփոխություններ կատարելու մասին» Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կողմից 2012 թվականի հոկտեմբերի 18-ի թիվ 184 որոշումը:

4. «Սահմանափակումների կիրառման մասին» հիմնադրույթի մեջ կատարվող փոփոխությունների 2-րդ կետը (Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կողմից 2012 թվականի դեկտեմբերի 4-ի «Սահմանափակումների կիրառման մասին» հիմնադրույթի մեջ փոփոխություններ կատարելու մասին» թիվ 242 որոշման հավելված):

5. Մաքսային միության հանձնաժողովի և Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կողմից որոշումների մեջ կատարվող փոփոխությունների 2-րդ կետի «բ» ենթակետը (Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կողմից 2012 թվականի դեկտեմբերի 4-ի «Մաքսային միության արտահանման տնտեսական գործունեության միասնական ապրանքային անվանացանկի փոփոխման հետ կապված Մաքսային միության հանձնաժողովի և Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կողմից որոշումների մեջ փոփոխություններ կատարելու մասին» թիվ 243 որոշման հավելված):

6. Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կողմից 2012 թվականի դեկտեմբերի 4-ի «32 նամուտերից ոչ ավելի տեխնոլոգիական գործընթացով արտադրված միկրոպրոցեսորների մասով՝ Մաքսային միության արտաքին տնտեսական գործունեության միասնական ապրանքային անվանացանկի և Մաքսային միության միասնական մաքսային սակագին ու Եվրասիական

տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի օգոստոսի 16-ի թիվ 134 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» թիվ 260 որոշման 2-րդ կետը:

7. Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի դեկտեմբերի 25-ի «Մաքսային միության արտաքին տնտեսական գործունեության միասնական ապրանքային անվանացանկի և հաշվողական մեքենաների առանձին տեսակների նկատմամբ Մաքսային միության միասնական մաքսային սակագնի և Մաքսային միության Հանձնաժողովի և Եվրասիական տնտեսական կոլեգիայի որոշ որոշումների մեջ փոփոխություններ կատարելու մասին» թիվ 303 որոշման 4-րդ կետը:

8. Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2013 թվականի ապրիլի 24-ի «Այն Ապրանքների միասնական ցանկի 2.12 բաժնում փոփոխություններ կատարելու մասին, որոնց ներմուծման կամ արտահանման նկատմամբ Եվրասիական տնտեսական համայնքի շրջանակներում Մաքսային միության անդամ պետությունների կողմից երրորդ երկրների հետ առևտրում կիրառվում են արգելքներ կամ սահմանափակումներ» թիվ 95 որոշումը:

9. «Սահմանափակումների կիրառման մասին» հիմնադրույթի մեջ փոփոխություններ կատարելու մասին» Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2013 թվականի մայիսի 14-ի թիվ 103 որոշումը:

10. Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2013 թվականի հունիսի 4-ի «Այն Ապրանքների միասնական ցանկի 2.12 բաժնում փոփոխություններ կատարելու մասին, որոնց ներմուծման կամ արտահանման նկատմամբ Եվրասիական տնտեսական համայնքի շրջանակներում Մաքսային միության անդամ պետությունների կողմից երրորդ երկրների հետ առևտրում կիրառվում են արգելքներ կամ սահմանափակումներ» թիվ 121 որոշումը:

11. Մաքսային միության հանձնաժողովի և Եվրասիական տնտեսական հանձնաժողովի առանձին որոշումների մեջ կատարվող փոփոխությունների 11-րդ կետի «ա» և «գ» ենթակետերը (Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2013 թվականի հունիսի 25-ի «Մաքսային միության հանձնաժողովի և Եվրասիական տնտեսական հանձնաժողովի առանձին որոշումների մեջ փոփոխություններ կատարելու ու Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի որոշման նախագծին հավանություն տալու մասին» թիվ 140 որոշման հավելված):

12. Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2013 թվականի հոկտեմբերի 22-ի «Այն Ապրանքների միասնական ցանկի 2.12 բաժնում փոփոխություն կատարելու մասին, որոնց ներմուծման կամ արտահանման նկատմամբ Եվրասիական տնտեսական համայնքի շրջանակներում Մաքսային միության անդամ պետությունների կողմից երրորդ երկրների հետ առևտրում կիրառվում են արգելքներ կամ սահմանափակումներ» թիվ 234 որոշումը:

13. Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2013 թվականի դեկտեմբերի 17-ի «Մաքսային միության արտաքին տնտեսական գործունեության միասնական ապրանքային անվանացանկի և Մատուտակի արմատի համար Մաքսային միության սակագնի, Մաքսային միության հանձնաժողովի ու Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի որոշ որոշումների մեջ փոփոխություններ կատարելու մասին» թիվ 300 որոշման 2-րդ կետի «ա» ենթակետը:

14. Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2014 թվականի ապրիլի 14-ի «Մաքսային միության արտաքին տնտեսական գործունեության միասնական ապրանքային անվանացանկի և Սաթի համար Մաքսային միության միասնական մաքսային սակագնի, Մաքսային միության հանձնաժողովի ու Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի որոշ որոշումների մեջ փոփոխություններ կատարելու, ինչպես նաև Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի որոշման նախագծին հավանություն տալու մասին» թիվ 53 որոշման 3-րդ կետի «ա» ենթակետի երկրորդ և երրորդ պարբերությունները:

15. Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2013 թվականի հոկտեմբերի 22-ի «Այն Ապրանքների միասնական ցանկի 2.6 բաժնում փոփոխություն կատարելու մասին, որոնց ներմուծման կամ արտահանման նկատմամբ Եվրասիական տնտեսական համայնքի շրջանակներում Մաքսային միության անդամ պետությունների կողմից երրորդ երկրների հետ առևտրում կիրառվում են արգելքներ կամ սահմանափակումներ» թիվ 82 որոշումը:

16. Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2014 թվականի հունիսի 25-ի «Մաքսային միության արտաքին տնտեսական գործունեության միասնական ապրանքային անվանացանկի փոփոխման հետ կապված՝ Մաքսային միության հանձնաժողովի և Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի որոշ որոշումների մեջ փոփոխություններ կատարելու մասին» թիվ 94 որոշման 3-րդ կետը:

17. Մաքսային միության հանձնաժողովի և Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի որոշումներում կատարվող փոփոխությունների 5-րդ կետը (Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2014 թվականի դեկտեմբերի 2-ի «Մաքսային միության արտաքին տնտեսական գործունեության միասնական ապրանքային անվանացանկի և Քաղաքացիական ավիացիայի համար ապրանքների ու քաղաքացիական օդանավերի առանձին տեսակների համար Մաքսային միության միասնական մաքսային սակագնի, Մաքսային միության հանձնաժողովի ու Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի որոշ որոշումների մեջ փոփոխություններ կատարելու ու Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի որոշման նախագծին հավանություն տալու մասին» թիվ 214 որոշման թիվ 4 հավելված):

18. Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2014 թվականի դեկտեմբերի 24-ի «Այն Ապրանքների միասնական ցանկի 2.12 բաժնում փոփոխություններ կատարելու մասին, որոնց ներմուծման կամ արտահանման նկատմամբ Եվրասիական տնտեսական համայնքի շրջանակներում Մաքսային միության անդամ պետությունների կողմից երրորդ երկրների հետ առևտրում կիրառվում են արգելքներ կամ սահմանափակումներ» թիվ 247 որոշումը:

19. Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2014 թվականի դեկտեմբերի 24-ի «Այն Ապրանքների միասնական ցանկի 2.8 բաժնում փոփոխություններ կատարելու մասին, որոնց ներմուծման կամ արտահանման նկատմամբ Եվրասիական տնտեսական համայնքի շրջանակներում Մաքսային միության անդամ պետությունների կողմից երրորդ երկրների հետ առևտրում կիրառվում են արգելքներ կամ սահմանափակումներ» թիվ 248 որոշումը:

\* Սյունակում կատարվում է հետևյալ գրառումը՝ «գործում է» կամ «չեղյալ է հայտարարված»: 7-րդ սյունակում «չեղյալ է հայտարարված» գրառում կատարելու դեպքում 8-րդ սյունակում նշվում է սույն ռեեստրում այդ գրառումը կատարելու ամսաթիվը: Ընդ որում, տուրև առանձնացվում է գույնով (մոխրագույն երանգով):

\*\* Արտադրողի կողմից սահմանված ժամկետի ընթացքում չօգտագործված կուրս:

\*\* Բացառությամբ կոնսերվատներով մշակված փայտանյութի:

Գրեկանդական փոկից (բացառությամբ գրեկանդական փոկի տարբեր տարիքի ծագերի) պատրաստված արտադրատեսակների ներմուծումը թույլատրվում է, եթե՝

այդպիսի արտադրատեսակները ստացվել են այն բնիկ ժողովուրդների կողմից ավանդական ձևով իրականացվող ռուսի արդյունքում, որոնց նշելով հավաքվում են այն արևմտկական և սուբարկտիկական շրջանների բնիկ բնակիչները, որտեղ նրանց ներկայումս կամ ավանդաբար ունեն բնիկ ժողովուրդների իրավունքներ, այդ թվում՝ յուպիկ, ինուպիտ, ինուվիպուիտ (Կանադա), կապայիտ (Գրեկանդիա), ինչը հաստատվում է ապրանքի ծագման երկրի լիազոր մարմնի կողմից տրված հավաստագրով՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կողմից համաձայնեցված ձևով:

այդպիսի արտադրատեսակները ներմուծվում են ֆիզիկական անձանց կողմից անձնական օգտագործման համար (ոչ առևտրային նպատակներով):

## Պաշտոնական հրապարակման օրը՝ 23 հունիսի 2022 թվական: